

ՎՃԻՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ

Երկու հազար տասնինը թվականի ապրիլի իննին

քաղաք Երևան

Բնապահպանական հանրային դատարանը՝ Ն.Վարդանյան, Կ.Դանիելյան,
Զ.Հովհաննիսյան, Ի.Զարաֆյան կազմով

Քարտուղարությամբ՝ Վիկտորյա Բուռնազյանի

Մասնակցությամբ՝ ԷկոԼուրի փորձագետ Ռոզա Ջուլիակյանի

Դիմումատու՝ «Հայկական բնապահպանական ճակատ» քաղաքացիական
նախաձեռնության անդամ Անի Խաչատրյան

Պատասխանողի ներկայացուցիչ/ներ՝ պատշաճ ծանուցվել են, սակայն չեն
ներկայացել

Դատարանը, դռնբաց դատական նիստում քննելով «Հայաստանի անտառային
Էկոհամակարգի խախտումների վերաբերյալ» բնապահպանական հանրային գործն՝
ըստ Անի Խաչատրյանի դիմումի,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Հայաստանում՝ 90-ական թվականների սկզբից էներգետիկ ճգնաժամի արդյունքում ոչնչացվել են անտառների հսկայական տարածքներ, վատթարացել են անտառի որակական ցուցանիշները. իջել է անտառների լրիվության ցուցանիշը և բոնիտետը, փոխվել անտառի կազմը՝ բարձրաժեք՝ կաղնու և հաճարենու անտառին փախարինել են ցածրաժեք՝ բոխուտները և դաժուտները: Փայտանյութը՝ 90-ականների սկզբին օգտագործվում էր բացառապես որպես վառելափայտ, իսկ այնուհետ օգտագործվեց նաև բիզնեսի նպատակներով /կայուղիքագործություն, շինափայտ, փայտածուխի արտադրություն և արտահանում/: Այդ տարիներից ի վեր բազմաթիվ անտառային տարածքներ ապօրինի զավթվել են կամ, փոխելով

անտառային ֆոնդի հողերի նպատակային նշանակությունը, դուրս բերվել անտառային հողերի ֆոնդից և օգտագործվել են այլ նպատակներով:

Հայաստանի անտառային հողերը 2010 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմում են 459.9 հազ. հեկտար, որից անտառածածկ հողերը՝ 334.1 հազ. հա և հանդիսանում են պետական սեփականություն: Նշված անտառային հողերից 344,2 հազ. հեկտարը կամ 74,8 տոկոսը գտնվում է «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրինության ներքո: 1993 թվականից հետո պետությունը չի կատարել Հայաստանի անտառների գույքագրում: 1993թ-ի տվյալներով Հայաստանի անտառները կազմում են երկրի տարածքի շուրջ 11.2%: Սակայն իրականում տարբեր փորձագիտական գնահատականներով անտառների տարածքները կրճատվել են մինչև 7-8 % (ըստ 2001 թվականին ՆԱՄԱ-ի տիեզերքից կատարած տվյալների Հայաստանի տարածքում անտառը զբաղեցնում է 246,099 հա): Միջազգային չափանիշներով մարդու լիարժեք գործունեությունն ապահովող անտառային կենսատարածքի մակերեսը 0,67 հա է, իսկ Հայաստանում՝ նույնիսկ 1993 թվականի անտառային տարածքների հաշվարկով, այդ թիվը կազմում է 0,1 հա:

Անտառների զանգվածային ապօրինի հատումները հանգեցրել են.

- անտառային էկոհամակարգի ոչնչացմանը
- կլիմայի փոփոխությանը
- թթվածնի պաշարի նվազմանը
- հողերի դեգրադացիայի, երկրի շուրջ 80 % -ի անապատացման նպաստմանը
- էկոհամակարգերի ջրակարգավորիչ ֆունկցիաների կորստի, աղբուրների, վտակների, փոքր լճակների, ջրաճահճային այլ տարածքների չորացման
- կենդանիների ապրելավայրերի և բույսերի աճելավայրերի վատթարացմանը և կորստին
- կենսաբազմազանության նվազմանը:

Անտառների ոչնչացումն առաջացրել է նաև սոցիալական, տնտեսական, դեմոգրաֆիական և մարդու առողջության լուրջ խնդիրներ:

2. Դիմումատուի փաստարկները և իրավական դիրքորոշումը

Դիմումատու՝ Ա.Խաչատրյանը, դիմելով Դատարան, ներկայացրել է հետևյալ փաստերը և հիմնավորումները.

«Հայկական բնապահպանական ճակատ» (ՀԲՃ) քաղաքացիական նախաձեռնությունը 2014թ-ից սկսած, իսկ 2015-2016թթ. «Անտառային հասարակական մոնիտորինգ» ծրագրի շրջանակներում ստեղծված կամավորների խմբի առանձին դիտարկումների արդյունքում հայտնաբերել է 3000-ից ավելի

անօրինական հատված ծառ: Մոնիտորինգի արդյունքներով իրավապահ մարմիններին ուղարկված գործերը որակվել են որպես հանցագործություն, հարուցվել են քրեական գործեր և կիրառվել են պատիժներ: Այլ դեպքերով անտառների պահպանության համար պատասխանատու կառույցների որոշ աշխատակիցներ ազատվել են աշխատանքից: Սակայն այդ բոլոր մարդիկ ընդամենը կատարողներ էին:

Հատկապես պետք է նշել, որ այդ տարիներին մեր կողմից հայտնաբերած ապօրինի հատումների հսկայական ծավալների մասին ահազանգերը սկզբում միշտ հերքվում էին «Հայանտառ» ՊՈԱԿ-ի ղեկավարության կողմից, բայց հետո մեր կողմից ներկայացվող անհերքելի փաստերը՝ տեղանքի կորդինատների, կազմած մանրամասն մասնագիտական արձանագրությունների, լուսանկարների և տեսանյութերի տեսքով, ստիպում էին ընդունել իրականությունը: Սակայն, որպես կանոն, անտառահատումների իրական պատվիրատուները մնում են անպատիժ: Իրավապահ մարմինները չեն բացահայտել հատումների իրական պատվիրատուներին և պատասխանատուներին: Իր հերթին, «Հայանտառ» ՊՈԱԿ-ը մի քանի անտառտնտեսություններում անօրինական հատումների մասին ահազանգերից հետո չի նշանակել պաշտոնական վերստուգումներ: Մյուս վերահսկող մարմինները նույնպես ըստ էության ցուցաբերել են հանցավոր անգործություն:

Իջևանի անտառտնտեսություն-2014թ.

Մոտ 200 ապօրինի հատված ծառ է հայտնաբերվել: Անթիվ հատված ծառեր, առանց պետհամարանիշի բեռնատար մեքենաներ, որոնց մեծ մասը չունեն ծառեր հատելու փաստաթղթեր, մերկացած և սողանքների վերածված լեռնալանջեր, անհասկանալի հիմնավորումներ, մեզ տանել պատիվ տալու կամ ահաբեկելու փորձեր անող մարդիկ: Հարուցվեց քրեական գործ: Մեղավորները չհայտնաբերվեցին: Պատժվեցին աշխատակիցները (աշխատանքից ազատում, նկատողություններ):

Կապանի անտառտնտեսություն – 2015թ.

Հայտնաբերեցինք ապօրինի հատված բազմաթիվ ծառեր: Ահազանգի հիման վրա ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչությունում քննվող քրեական գործով ձեռնարկված քննչական գործողությունների արդյունքում պարզվել են «Ճակատենի անտառպետության» թիվ 5 պահաբաժնում կատարված անտառահատումների մի շարք հանգամանքներ, հստակեցվում է առերևույթ հանցագործություն կատարած անձանց շրջանակը: Ձեռք բերված ապացույցների հիման վրա՝ երեք անձի մեղադրանք է առաջադրվել:

Նախնական քննությամբ պարզվել է, որ 2015թ. օգոստոսի կեսերից սեպտեմբերի 20-ն ընկած ժամանակահատվածում «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Կապանի

անտառտնտեսություն» մասնաճյուղի «Ճակատեն» անտառպետության թիվ 5 պահապաժնում բենզադոզի գործադրմամբ մինչև աճի դադարեցման աստիճանն ապօրինի հատվել է 142 ծառ (կաղնի, բոխի և թխկի տեսակի)՝ պետությանը պատճառելով առանձնապես խոշոր չափերի վնաս՝ 2 662 500 դրամ:

Քննությամբ պարզվել է ապօրինի անտառահատում իրականացրած անձանց ինքնությունը և 2015թ. հոկտեմբերի 15-ին առանձնապես խոշոր չափերով անտառահատում կատարելու կասկածանքով ձերբակալվել են Սյունիքի մարզի բնակիչներ Ա.Սարգսյանը և Վ.Աթաբեկյանը: Քննության արդյունքներով՝ վերջիններիս հոկտեմբերի 18-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասով, նույն օրը քննիչը միջնորդություն է ներկայացրել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ Ա.Սարգսյանի և Վ.Աթաբեկյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին, ինչը մերժվել է:

Նախաքննությամբ պարզվել է նաև, որ ապօրինի ծառահատումները հետևանք են դրանք կանխարգելելու պարտականություն ունեցող անձի կողմից դրսևորված անբարեխիղճ վերաբերմունքի:

2015 թվականի հոկտեմբերի 20-ին ձերբակալվել է «Ճակատենի անտառպետության» թիվ 5 պահապաժնի անտառապահ Անդրանիկ Մարգարյանը: Նախաքննությամբ բավարար ապացույցներ են ձեռք բերվել, որ անտառապահը, օժտված լինելով ապօրինի անտառահատումները կանխարգելելու, ապօրինի հատված անտառանյութը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով առգրավելու և պահպանելու իրավունքներով, դրանց կատարման ընթացքում աշխատանքի հանդեպ ունեցած անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով թույլատրել և օժանդակել է իր պահպանությանը հանձնված անտառամասից, ապօրինի՝ բենզադոզի գործադրմամբ, հատել նշված ծառերը:

Հոկտեմբերի 23-ին Ա.Մարգարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-296-րդ հոդվածի 3-րդ մասով: Նույն օրը քննիչը միջնորդություն է ներկայացրել դատարան՝ նրա նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը կիրառելու վերաբերյալ, ինչը բավարարվել է: Գործը փոխանցվել է դատարան:

Շիկահող արգելոց-2015թ.

ՀՀ Սյունիքի մարզի Ծավ գետի հարակից տարածքներում հայտնաբերվել է 208 ծառի կոճը, բուսական աշխարհին պատճառով վնասը կազմել է 5.803.750 դրամ: Ներկայումս իրականացվում են տարածքի պատկանելիությունը պարզելու և

տեղադիրքի ճշգրտման աշխատանքներ: Նյութերը ներկայացվել են ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Կապանի բաժին: Այս գործը մեր ունեցած տեղեկությունների համաձայն նույնպես ինչ-որ փուլում կասեցվել է:

Անտառների հասարակական մոնիթորինգ ծրագիր

«Հայկական բնապահպանական ճակատ» (ՀԲՃ) քաղաքացիական նախաձեռնության գրասենյակում անցկացվեցին ուսուցողական դասընթացներ: Ձևավորվեց կամավորների խումբ:

ՀԲՃ կամավորների խումբը՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Դսեղի և Եղեգնուտի անտառտնտեսությունների մի քանի տեղամասերի տարածքում, հայտնաբերեց հազարից ավելի տարբեր տեսակի անօրինական հատված ծառ: Դրանցից մոտ 250-300-ը թարմ հատված էին, իսկ մնացածը՝ մինչև 5 տարվա վաղեմության: Անտառում ամենուրեք մնացած կոճղերն ունեին 10-ից մինչև 90 սմ տրամագիծ:

Դսեղի անտառտնտեսություն – 2015թ.

Երկու օրում հայտնաբերեցինք մոտ 600 անօրինական հատված ծառ, որոնցից գրեթե 350-ը թարմ հատված: Այս ահազանգի ուղղությամբ ոչ մի քայլ չի իրականացվել պետական մարմինների կողմից:

Եղեգնուտի անտառտնտեսություն – 2015թ.

Երկու օրում հայտնաբերեցինք մոտ 500 անօրինական հատված ծառ, որոնցից գրեթե 200-ը թարմ հատված:

Հարուցվեց քրեական գործ, սակայն իրական փաստերը կոծկվեցին:

«Դիլիջան» ազգային պարկ – 2015թ.

«Դիլիջան» ազգային պարկ: Հաղարծին վանական համալիրից դեպի հյուսիս-արևմուտք ընկած տարածքներում հայտնաբերեցինք 10-60 սմ տրամագիծ ունեցող 22 թարմ հատված ծառ: Հատված ծառերը աճում էին 20-45 աստիճան թեքությամբ լանջերի վրա: Ահազանգը մնաց անհետևանք:

Հովք – 2015թ.

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի Իջևանի անտառտնտեսություն երկու անհայտ անձիք ներկայացել էին որպես անտառտնտեսության աշխատակիցներ և փակել էին Ծրագրի կամավորների ճանապարհը՝ թույլ չտալով նրանց առաջ շարժվել և շարունակել մոնիտորինգային աշխատանքները: Հարուցվեց քրեական գործ:

Նոյեմբերի 7-ին «Անտառների հասարակական մոնիտորինգ» ծրագրի կամավորներ՝ Անի Խաչատրյանը, Վահրամ Պետրոսյանը և «Հետք» առցանց լրատվամիջոցի լուսանկարիչ Նարեկ Ալեքսանյանն այցելել էին «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Իջևանի անտառտնտեսություն, որտեղ երկու անհայտ անձիք, ովքեր ներկայացել էին որպես անտառտնտեսության աշխատակիցներ, փակել էին Ծրագրի կամավորների ճանապարհը՝ թույլ չտալով նրանց առաջ շարժվել և շարունակել մոնիտորինգային աշխատանքները:

Մենք անտառով 2-3 կմ անցել էինք և արդեն ֆիքսել էինք 45 ապօրինի հատված կոճղեր: Երբ հասանք Հովք գյուղի վերևի անտառները, մոտ 1 կմ հեռավորության վրա անտառից լավեցին էլեկտրական սղոցի ձայներ: Մինչ այդ մենք նկատել էինք, որ մեզ մեքենայով հետևում են: Երբ շարժվեցինք դեպի սղոցի ձայնի կողմը, երկու հոգի կտրեցին մեր ճանապարհը, նրանցից մեկը, ով ներկայացավ Դավիթ Եզանյան անունով, ասաց, որ ինքն անտառապահն է, մեզ ասաց, որ մենք իրավունք չունենք զբոսնել անտառով: Ես ասացի, որպեսզի ներկայացնի փաստաթուղթ, նա էլ պատասխանեց, որ չունի: Նրանք մեզ թույլ չտվեցին առաջ շարժվել դեպի էլեկտրական սղոցի ձայների կողմը, և մենք զանգեցինք ոստիկանություն: Մոտ 2 ժամ հետո ոստիկանությունն եկավ: Մեզ տարան ոստիկանության Իջևանի բաժին, որտեղ մենք բացատրագիր գրեցինք: Ոստիկաններն ասացին, որ այդ երկու անձանց էլ են բերել ոստիկանություն, և նրանք նույնպես բացատրագիր են գրում, բայց ես նրանց ոստիկանության շենքում չեմ տեսել:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի Իջևանի անտառտնտեսության պահպանության գծով տնօրենի տեղակալ Արթուր Գաբրիելյանն ԷկոԼուրին ասաց, որ ինքն է հրահանգել թույլ չտալ Ծրագրի անդամներին մտնել անտառ: Հարցին՝ իրավական ինչ հիմքով է ինքն արգելում մարդկանց մուտքը անտառ, Արթուր Գաբրիելյանը չկարողացավ պատասխանել, փոխարենն ասաց. «Ում ճանաչում եմ՝ թողնում եմ, ում չեմ ճանաչում՝ չեմ թողնում»:

Մեզ թույլ չտվեցին մտնել անտառ, որովհետև այնտեղ ապօրինի ծառահատումներ էին իրականացնում, և մենք շատ բան կարող էինք բացահայտել: Նրանք մեզ ասում էին, որ օրինական ծառահատումներ են իրականացվում, ես էլ ասացի՝ եթե օրինական են, արի միասին գնանք, տեսնենք: Ասաց՝ չէ: Իրենց ձեռք չէր տալիս, որ մենք ֆիքսենք, ինչ է կատարվում անտառում:

Մինչ այս դեպքը «Անտառների հասարակական մոնիտորինգ» ծրագրի կամավորներն այցելել են Լոռու մարզի Դսեղի և Եղեգնուտի անտառտնտեսություններ, որտեղ հայտնաբերել են 1000-ից ավելի անօրինական հատված ծառեր:

Եթե «Հայանտառ»-ն այդպիսի ակտիվությամբ գործունեություն ծավալեր ապօրինի հատողների և բեռնատար մեքենաների մուտքը դեպի անտառ փակելու ուղղությամբ, այլ ոչ թե քաղաքացիների, ովքեր փորձում են բացահայտել անտառում տիրող ապօրինությունները, մենք այսպիսի վիճակ չէինք ունենա:

Ստեփանավան – 2015 թ.

Նոյեմբերի 22-ին [«Անտառների հասարակական մոնիտորինգ»](#) ծրագրի շրջանակներում իրականացրած հերթական դաշտային աշխատանքների ընթացքում երկու խմբերով տարբեր հատվածներում հայտնաբերեցինք մոտ 1100 հատված ծառ, որոնցից գրեթե 900-ը՝ թարմ: Կամավորների կողմից հայտնաբերած բազմաթիվ ապօրինի անտառահատումների փաստերը հայտնվեցին նաև ՀՀ վարչապետի վերահսկողական ծառայության ուշադրության շրջանակներում: Դեկտեմբերի 7-ին այդ ծառայության ներկայացուցիչների մասնակցությամբ տեղազննում իրականացվեց «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Ստեփանավանի անտառտնտեսությունում, որին ներկա էին մեր երկու կամավորները, ինչպես նաև բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության և «Հայանտառ»-ի մի շարք աշխատակիցներ:

Հայանտառի աշխատակիցները անտառի հեշտ հասանելի հատվածներում փորձել էին օրինականացնել ապօրինությունները՝ մեր կողմից դեռևս 2015թ-ի նոյեմբերի 22-ին հայտնաբերած կոճղերի մի մասի վրա թարմ նշումներ կատարելու միջոցով: Իրենց կարծիքով դա կարող էր հիմնավորել հատումների օրինական լինելը, բայց իրականում ստացվում է հակառակը, քանի որ, ըստ կարգի, այդ նշումները պետք է կատարվեն ծառերը հատելուց առաջ, այլ ոչ թե հետո:

Չնայած նրան, որ ձյան բավականին հաստ շերտի առկայությունը լուրջ խոչընդոտում էր մեր տեղաշարժը, այնուամենայնիվ, մեզ հաջողվեց հասնել համատարած հատումների տարածքներ և տեղազննման բոլոր մասնակիցներին ցույց տալ մեր նախորդ այցելության ժամանակ արդեն իսկ արձանագրած [խայտառակ վիճակը](#): Այդ կոճղերի վրա անտառի պահպանության պատասխանատուները դեռևս ոչ մի նոր նշում չէին հասցրել անել՝ ենթադրելով, որ մենք այսպիսի եղանակային պայմաններում ուղղակի չենք հասնի մինչև այդ դժվար հասանելի տարածքները:

Մենք դադարեցրեցինք տեղազննումը միայն այն ժամանակ, երբ բոլոր մասնակիցները համոզվեցին, որ մեր ներկայացրած փաստերն անհերքելի են, իսկ բնապահպանական պետական տեսչության աշխատակիցները չափազրեցին և գրանցեցին թարմ հատված ապօրինի ծառերի զգալի մասը: Այժմ արդեն ժամանակն է,

որպեսզի վերահսկող մարմինները պատշաճ կատարեն իրենց աշխատանքներն ու վերջապես կարգավորեն այս ոլորտի փնթի կառավարումը:

Վարչապետի վերահսկողության ծառայողների հետ այցելությունից հետո հարուցվեց քրեական գործ, մի շարք աշխատակիցներ հեռացվեցին աշխատանքից: Նրանց կողմից գրանցած 96 ծառի կոճղ հատելու համար բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման չափը կազմել է 7.077.000 դրամ:

Իսկ ինչ վերաբերում է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի գործելաձևին և պահվածքին, ապա դրա լավագույն բնորոշումը եղավ տեղագնման ժամանակ իրենց աշխատակիցներից մեկի կողմից մեզ ուղղված հետևյալ հոխորտանքը. «Ձեզ էլ իմ անտառում չտենամ...»:

2015 թվական ընթացքում «Անտառների հասարակական մոնիտորինգ» ծրագրի շրջանակներում իրականացված դաշտային աշխատանքների արդյունքում «Հայկական բնապահպանական ճակատ» (ՀԲՃ) քաղաքացիական նախաձեռնության կամավորների խումբը «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Կապանի, Եղեգնուտի, Դսեղի և Ստեփանավանի անտառտնտեսությունների տարածքներում հայտնաբերել է ավելի քան 2000 անօրինական հատված ծառ: Գրեթե բոլոր ահագանգերի արդյունքում հարուցվել են քրեական գործեր և մի մասն էլ արդեն քննվում է դատական ատյաններում:

Այս փաստերին վերաբերող մեր պաշտոնական հարցման պատասխանից տեղեկանում ենք, որ այդ ծառահատումների մի մասը հետագայում արձանագրել է նաև բնապահպանության նախարարությունը: Նախարարության բնապահպանական պետական տեսչության ուսումնասիրությունների արդյունքում ստացված տվյալներն, իհարկե, իրականության միայն փոքր մասն են արտացոլում, բայց սա էլ կարելի է որոշակի առաջընթաց և ձեռքբերում համարել:

Ներկայացնում ենք ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավար Խաժակ Աղաբեկյանի պատասխանն իրենց կողմից արձանագրած ծառահատումների վերաբերյալ.

«1. «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Կապանի» անտառտնտեսություն մասնաճյուղում ապօրինի հատված 142 ծառի կոճղ, բուսական աշխարհին պատճառված վնասը կազմել է 2.662.500 դրամ: Նյութերը ներկայացվել են ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Կապանի բաժին:

2. «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Դսեղի անտառտնտեսություն» մասնաճյուղում՝ 27 ծառի կոճղ, բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման չափը կազմել է 655.500 դրամ: Նյութերը ներկայացվել են ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզի քննչական վարչության Թումանյանի քննչական բաժնին:

3. «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Ստեփանավանի անտառտնտեսություն» մասնաճյուղում՝ 96 ծառի կոճղ, բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման չափը կազմել է 7.077.000 դրամ: Նյութերը ներկայացվել են ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզի քննչական վարչության Ստեփանավանի քննչական բաժնին:

4. «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Եղեգնուտի անտառտնտեսություն» մասնաճյուղում՝ 22 ծառի կոճղ, բուսական աշխարհին պատճառված վնասի չափը կազմել է 841.500 դրամ: Նյութերը ներկայացվել են ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզի քննչական վարչությանը:

5. Հայտնաբերվել է նաև ՀՀ Սյունիքի մարզի Ծավ գետի հարակից տարածքներում 208 ծառի կոճղ, բուսական աշխարհին պատճառված վնասը կազմել է 5.803.750 դրամ: Ներկայումս իրականացվում են տարածքի պատկանելիությունը պարզելու և տեղադիրքի ճշգրտման աշխատանքներ: Նյութերը ներկայացվել են ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Կապանի բաժնին:

Ուզում ենք հատկապես նշել, որ շատ հեռու են իրականությունից Դսեղի և Եղեգնուտի անտառտնտեսությունների մասին ներկայացված նախարարության տեղեկությունները, որտեղ մենք հայտնաբերել էինք մոտ 1000 ծառի կոճղ, որոնց վրա չկային օրինականությունը հաստատող ոչ մի նշում, ինչը հստակ իրավունք է տալիս մեզ պնդելու, որ դրանք՝ բոլորն էլ եղել են ապօրինի հատումներ:

Լավարի անտառտնտեսություն – 2016 թ.

Շնողի անտառպետության տարածքում հայտնաբերեցինք ավելի քան 600 անօրինական հատված ծառ: Ամեն կերպ խուսափեցին այս ահազանգի հետքերով գնալ: Չզիտես ինչու հատկապես շատ ակտիվ էր Շնողի գյուղապետը:

Իջևանի անտառներ - 2016թ.

Անտառներում ամբողջ օրը տարբեր ուղղություններից լսվում է էլեկտրական սղոցի ձայնը՝ վաղ առավոտից մինչև ուշ երեկո: Նկարներն արված են միայն ճանապարհին, բայց եթե մի քիչ գնանք դրանց հետքերով, պատկերն ահավոր կլինի, լիքը ճանապարհներ են տանում դեպի նոր հատված տարածքներ: Կոճղերի թեփը թարմ է, իսկ բները սևացած, քանի որ ձյունանման բան են լցնում վրան, որ հնի տպավորություն թողնի:

Որպես եզրակացություն ուզում եմ նշել, որ բոլոր դեպքերում պետական և իրավապահ մարմինները փորձել են թաքցնել իրական պատկերը, հանցագործության մասշտաբներն ու դրա էկոլոգիական անդառնալի հետևանքները: Անտառների ոչնչացման կազմակերպված ողջ հանցագործ շղթան չի բացահայտվել, իսկ դրա

վերին օղակները մնացել են անպատիժ: Հետագայում՝ 2017-2019թթ. բացահայտումները ցույց տվեցին, որ իսկապես, Հայաստանի անտառները ենթարկվել են իսկական սպանդի և դա արվել է ամենաբարձր մակարդակներում հովանավորչության պայմաններում:

Դիմելով Բնապահպանական հանրային դատարան՝ հուսով եմ, որ ձեր կողմից կիրականացվի լրիվ, օբյեկտիվ և անաչառ քննություն, և միջոցներ կձեռնարկվեն օրինախախտներին պատասխանատվության ենթարկելու և ՀՀ հասցված էկոլոգիական և տնտեսական վնասները վերականգնելու ուղղությամբ:

3. Պատասխանողի փաստարկները և իրավական դիրքորոշումը - չեն ներկայացվել՝ դատական նիստին դրանց ներկայացուցիչների չներկայանալու պատճառով:

4. Վկաների և տուժողների վկայությունները

Արամ Գաբրիելյան, ֆիզ.-մաթ.գիտ. թեկնածու /վկա/.

- ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի շրջանակներում ընդունված «Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողությունները/ներդրումը» (INDC) փաստաթղթով (ՀՀ կառավարության 10.09.15թ. հ.41-Ա որոշում) Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է միջազգային պարտավորություն մինչև 2050 թվականը երկրի անտառապատվածությունը ներկայիս պաշտոնական 11.2 %-ի փոխարեն հասցնել օպտիմալ՝ 20.1%-ի: Այդ ցուցանիշը ընդգրկված է «Կլիմայի փոփոխության Հայաստանի առաջին հաղորդագրության մեջ» ու հիմք է ծառայել Հայաստանի Հանրապետության «Անտառի ազգային ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի հ.1232-Ն որոշման մեջ այն ընդգրկելու համար: Նշված է. «Հաշվարկվել է, որ հանրապետության արդյունավետ անտառապատվածությունը կկազմի 20,1%» և որ դրա համար կպահանջվի անտառածածկ տարածքները ընդլայնել շուրջ 266,5 հազար հեկտարով»:

Ի լրումն նշվածի, 2018 թվականի հունիսի 21-22-ին Աստանայում տեղի ունեցած «Կովկասում ու կենտրոնական Ասիայում անտառային լանդշաֆտների վերականգմանը նվիրված նախարարական կլոր սեղանի» ընթացքում Հայաստանի պատվիրակությունը հայտարարեց, որ ստանձնում է միջազգային պարտավորություն հանրապետության տարածքի անտառապատվածությունը մինչև 2030թ. ավելացնել 260.000 հեկտարով: Այդ պարտավորությունն ամրագրվեց հանդիպման վերջնական հաշվետվությունում ու ներկայումս ամրագրված է միջազգային փաստաթղթերում:

Կլիմայի փոփոխության մեղմման Հայաստանի հանձնառության կատարման ժամանակահատվածը ըստ INDC-ի 2015թ.-ից մինչև 2050թ.-ն է: Այդ հանձնառությունն ընդունելուց հետո ընթանում է 4-րդ տարին, սակայն, մեր

տեղեկություններով, անտառապատման այդ հավակնոտ ծրագրի իրականացման ուղղությամբ գործողություններ չեն կատարվում:

ՀՀ կառավարության «Պետական անտառային հողերում անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման հետ չկապված աշխատանքների իրականացման կարգը սահմանելու մասին» 2007թ-ի օգոստոսի 30-ի հ.1045-Ն որոշման 8-րդ կետի 8.1 ենթակետով սահմանված է, որ անտառօգտագործման հետ չկապված աշխատանքների իրականացման դեպքում դիմումատուն երեք ամսվա ընթացքում լիազորված պետական մարմնի համաձայնեցմանն է ներկայացնում անտառային տնտեսությանը հասցվող վնասի հատուցման վերաբերյալ ծրագիր, որը ներառում է օգտագործման տրամադրվող անտառային տարածքի առնվազն կրկնապատիկի չափով անտառապատման աշխատանքների իրականացման նախագիծը և անտառապատման ժամանակացույցը:

Այնուհետև, 8-րդ կետի 8.2. ենթակետով սահմանված է, որ Ծրագիրն իրականացվում է դիմումատուի ֆինանսական միջոցների հաշվին, իսկ Ծրագրի իրականացման ավարտ է համարվում անտառապատման ընթացքում հիմնադրված անտառտնկարկները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով **անտառի շարք փոխադրելու օրը**: Ծրագրով նախատեսված աշխատանքները պատշաճ չիրականացնելը, ինչպես նաև պայմանագրի պահանջներն ու պայմանները չպահպանելը հիմք են հանդիսանում անտառօգտագործողից պահանջելու դադարեցնել աշխատանքները, հատուցել և վերականգնել անտառօգտագործման հետևանքով անտառներին և անտառային հողերին պատճառված վնասը:

Հարց է առաջանում, թե ով է պատասխանատու Հայաստանի անտառապատման վերը նշված ծրագրի համակարգման համար և 2015թ-ից մինչ այժմ այդ ծրագրի ուղղությամբ ինչ աշխատանքներ են կատարվել, որքան տարածք է անտառապատվելու մինչև 2030թ. և, այնուհետև՝ 2031թ-ից 2050թ., ինչ միջոցներով և անտառապատման ենթակա ինչ հողատարածքներում, նկատի ունենալով, որ 266,5 հազար հեկտար անտառապատման ենթակա տարածք անտառային հողերի կատեգորիայում չկա, 2015թ-ից մինչ 2018թ. որքան տարածք (քանի հեկտար) է անտառապատվել ոչ անտառածածկ հողերում՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ-ի օգոստոսի 30-ի N 1045-Ն որոշման 8-րդ կետի 8.1 և 8.2 ենթակետերի պահանջների, այսինքն, պետական անտառային հողերում անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման հետ չկապված աշխատանքների իրականացման ընթացքում օգտագործման տրամադրվող անտառային տարածքի առնվազն կրկնապատիկի չափով անտառապատման աշխատանքների իրականացման վերաբերյալ:

Հովիկ Մահակյան, Շնող համայնքի նախկին համայնքապետ /վկա/

- Երբ Թեղուտի ծրագիրը սկսվեց, ոչ բնապահպանական տեսչությունը, ոչ մոնիտորինգը, ոչ էլ՝ առավել ևս «Հայանտառ»-ը չէին մտնում Թեղուտի անտառի տարածքը: Եթե ինչ-որ բան էլ ուզում էին ստուգել՝ վախվորած: Նրանք միայն թվեր էին ներկայացնում: Միայն գրավոր իրազեկում էին «Հայանտառ»-ին ու մի

անհասկանալի քարտեզի նման բան կցում այդ տեքստին: Գերհզոր արտասահամանյան մակնիշի ավտոմեքենաներով ծառերը փրթել, գցել են գետնի տակ:

Մովսես Մանուկյան, Կոտայքի մարզ, «Առողջ Հրադան» քաղաքացիական նախաձեռնություն /տուժող/

- Ես կուզեմ հայցի մեջ ներառվել նաև այն անտառների կարգավիճակի հարցը, որոնք կառավարության հանիրավի որոշումներով հողատեսքերի փոփոխության պատճառով դուրս են գրվել անտառային հողերի ֆոնդից, տրամադրվել են համայնքներին և հանիրավի ճանապարհով տրվել են սեփականաշնորհման: Օրինակ, Հրազդանի անտառտնտեսության տարածքում այդպիսի անտառների տարածքը կարող էր անցնել 1000 հա-ից: Հանքավանի, Աղվերանի, Ծաղկաձորի անտառները քաղաքին մոտ և հանգստյան գոտի լինելու պատճառով իրենց վրա շատ աչք ունեցողներ կային: Գործընթացը սկսվել էր 15-20 տարի առաջ, 6-7 տարի առաջ ավելի ինտենսացավ:

Մեր խնդիրը օրինախախտներին պատժելը չէ, այլ՝ այն տարածքները, որոնք սեփականաշնորհվել են, բայց դեռ այդտեղ կառուցապատում չի իրականացվել, վերադարձեն աստառային ֆոնդ:

Ծաղկաձորի դեպքում 60 հա-ի մասին էր խոսքը: Այդ անտառը շատ լավ վիճակի էր, փարթամ էր: Գրչի մեկ հարվածով դուրս բերվեց Հրազդանի անտառային հողերի նշանակության կատեգորիայից և փոխանցվեց Հրազդան համայնքին, չնայած որ Ծաղկաձոր համայնքին հարակից անտառներ են: Ասեմ ինչու, որովհետև Հրազդան համայնքում հողի կադաստրային արժեքը 1000 դրամ է, իսկ Ծաղկաձորում՝ 5000: Հրազդան համայնքը այդ հողերը հայտարարեց հանգստի կազմակերպման հողեր և աճուրդի հանեց, գնորդներ չհայտնվեցին, երկրորդ աճուրդով գները կրկնակի իջեցվեցին, օրենքը նման բան թույլ է տալիս: Կոպեկներով առան այդ հողերը: Տերեր դարձան 4-6 հա-ով: Հիմա այնտեղ հասցրել են միայն մեկ հյուրանոց կառուցել, որը անտառային հատվածից որոշ չափով կտրված է: Ի ուրախություն մեզ, դեռ քաղաքաշինություն չի գնացել այնտեղ, բայց պարսպապատվել են անտառները:

Կցանկանայինք հայցի մեջ ներառել, որ անտառային ֆոնդի հողերի փոփոխության հիմքերը ապօրինի են և վերադարձնել անտառային հողերի կատեգորիա:

Տաթև Հարությունյան, Տավուշի մարզ, Թեղուտ համայնքի բնակիչ /տուժող/

- «Դիլիջան» ազգային պարկի հարակից վայրերում գործազրկությունը շատ բարձր է: Համայնքի բնակիչներն աշխատանք չունենալու պատճառով հիմնականում օգտվում են անտառներից: Ծառահատումները շատ են: Եթե փակ է լինում, գողություն են

անում գիշերային ժամերին՝ ընտանիքի կարիքները հոգալու համար: Ցավալին այն է, որ Բնապահպանության նախարարության կողմից չկա ոչ մի վերահսկողություն հատկապես խոշոր չափի անտառահատումների համար: Ավելի շատ ակտավորում են այն բնակիչներին, ովքեր ընտանիքի կարիքները հոգալու համար են ծառահատում իրականացնում: Իսկ խոշոր անտառահատումների նկատմամբ վերահսկողություն չկա, անտեսում են:

Եղել է դեպք, որ հիվանդ երեխա ուներ, Երևանում բուժում էր անհրաժեշտ: Գնացել էր գողություն արել: 50 հազար դրամի փայտ պետք է գողանար, իրեն տուգանել են 600 հազար դրամի: Տվյալ մարդն ասում էր, եթե ես ունենամ այդ գումարը, ինչի պետք է գնամ, գողություն անեմ, որ տանեմ երեխային բուժելու:

Կան մարդիկ, որ մեծ գործեր են անում, հիմնականում շինափայտի համար՝ բավական մեծ վնաս պատճառելով բնությանը:

Կարծում եմ՝ անտառապահները չեն կարող մեկ օրում կամ շաբաթում այնպես հսկել անտառները, որ չլինեն ծառահատումներ:

Հայկ Գրիգորյան, «Բնապահպանի տուն» նախաձեռնության անդամ /վկա/

- «Հիմնականում բռնվում և տուգանվում են այն մարդիկ, ովքեր բիզնեսի մարդկանց հետ չեն համագործակցում: Հիմնական փայտ կտրողները համագործակցում են տվյալ մարդկանց կամ անտառապահների հետ: Առանց համապատասխան «թույլտվության» անտառ չեն մտնում: Խոսքն օրինական թույլտվության մասին չէ:

Տավուշի մարզի Թեղուտ և Հաղարծին համայնքների բնակիչները անտառահատումներով են զբաղվում: Տուգանքներ շատ շատերն ունեն, ու իրենց խոսքերով՝ թքած ունեն, չեն վճարում:

Օրենքով թույլ է տրվում վերցնել քամատապալ ծառերը: Դա ինչպես են անում: Ծառի ներքևի հատվածից մի փոքր կտրում են: Ծածկում են հողով: Մի քանի ամիս անց ծառը չորանում է: Շուտ եկած ծառի վրա քար են դնում, և դրան էլ ոչ ոք ձեռք չի տա: Նշում են, որ իրենց ծառն է: Նշում, որ տեսել են քամուց տապալված ծառ այսինչ տեղում և թույլտվություն ստանում այն վերցնելու:

Մինչև մարզպետարան դիմել ենք: Հետո հասկացանք, որ ամբողջ փոխկապակցված շղթա է: Հետո դիմեցինք Բնապահպանության նախարարություն, խոստումներ եղան, թե այս-այն կանենք, ոչինչ չարեցին: Ոստիկանություն էլ ենք դիմել, ոչինչ չեն արել: Կառավարություն էլ ենք դիմել: Անգամ վարչապետն էր գնացել, խստորեն զգուշացրել, որ ցանկացած ծառահատում խստորեն է պատժվելու, բայց հաջորդ օրը 18 հատ ծառ ճանապարհի մեջտեղում ցուցադրաբար փռեցին:

5. «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի փորձագետ՝ Ռոզա Ջուլիակյանի եզրակացությունը

- Անտառների կայուն կառավարման և անտառօգտագործման խնդիրներն են՝
 1. Ատառային հողերի և անտառածածկ տարածքների կադաստրային տվյալների անճշտություններ
 2. Անտառվերականգնման աշխատանքների անբավարար մակարդակ
 3. Անտառային տարածքների դեգրադացիայի կանխարգելմանն ուղղված աշխատանքների անբավարար մակարդակ
 4. ՀՀ կառավարության կողմից անտառային հողերի կատեգորիաների փոփոխության ոչ-բավարար հիմնավորվածություններ, անտառային տարածքների շարունակական կրճատում
 5. Ապօրինի անտառահատումների դեմ պայքարում և դրանց կանխարգելմանն ուղղված գործընթացներում ներգրավված պատկան մարմինների գործողությունների անբավարար մակարդակ, ապօրինի անտառահատումների հսկայական ծավալներ
 6. Անտառային ոլորտի վերաբերյալ տեղեկատվական դաշտի ոչ-թափանցիկ վիճակ
 7. Ոլորտում տիրող իրավական կարգավորումների ոչ լիարժեքություն:

I. Կադաստրային տվյալների անճշտություններ

Անտառային հողերի և անտառածածկ տարածքների կադաստրային տվյալների ելակետային տվյալները հավաստի չեն:

Այսպես՝

1. փաստացի բնական անտառային տարածքները, որոնք համայնքների հողերի գլխավոր հատակագծերում և ժամանակավոր սխեմաներում (ԺՄ) տրված են որպես գյուղատնտեսական նշանակության, կամ այլ հողատեսքեր
2. ԺՄ-ում տրված անտառային, բայց ոչ անտառածածկ հողեր, որոնք նշված չեն քարտեզներում, քանի որ չեն համապատասխանում անտառային հողերի հիմնական հասկացություններին
3. ԺՄ-ում տրված անտառային հողեր, որոնք չեն համապատասխանում բնության մեջ իրենց իրական տեղադիրքին, ռելիեֆի բնական ձևերի ու բնության տարրերին (ջրբաժաններ, ձորակներ, ողողատներ, գետեր, վտակներ), որոնց գործառնական նշանակությունը չի համապատասխանում իրականությանը, որոնք փոխվել են գյուղատնտեսական նշանակության կատեգորիայի հողերի միայն համայնքի ղեկավարի համաձայնությամբ, համայնքի համաձայնությամբ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից համայնքային հողերի վրա հիմնված անտառտնկարկներ, որոնք ձևավորված են որպես անտառ, սակայն դեռևս չեն

տեղափոխվել անտառային ֆոնդ, երկու համայնքների սահմանամերձ տարածքների վրա գտնվող անտառներ, որոնք մի համայնքում նշված են որպես արոտավայր, մյուսում՝ որպես անտառային հող:

Միայն Տավուշի և Լոռու մարզերի 134 համայնքների տվյալներով 18.600 հեկտար համայնքային անտառներ կադաստրային քարտեզներում նշված են եղել որպես այլ հողատեսքեր: Մինչդեռ, ոչ անտառային հողային կատեգորիաների 13.200 հեկտար տարածքը քարտեզագրվել է որպես անտառ:

2007թ. ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի (2009թ. անցել է Ծաղկաձոր համայնքի վարչական տարածք) 50,48 հա անտառային հողերը քարտեզագրվել են որպես խառը կառուցապատման և հատուկ պահպանվող տարածքների կատեգորիայի, նույնը նաև Մեղրաձորում:

«Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման և ենթակառուցվածքների կառուցման համար անտառային հողերի տրամադրման գործընթացում տեղ գտած անհամապատասխանություններ:

Կոռուպցիոն մեխանիզմների կիրառման օրինակ կարող է հանդիսանալ ՀՀ Քննչական կոմիտեի կողմից 2019թ, վերաբացված գործը, ինչը վերաբերում է 2007թ-ին Կոտայքի նախկին մարզպետի կողմից Ծաղկաձորի անտառների շուրջ 50.48 հա-ը որպես ոչ անտառապատ ներկայացնելու, դրա հիման վրա ՀՀ կառավարության կողմից ընդունված 422-Ն որոշմանը, այն ՀՀ պետական կադաստրի կողմից հաստատմանը, ՀՀ Ազգային ժողովի կողմից համայնքների նոր վարչատարածքային սահմանների ընդունմամբ դրանք Ծաղկաձորի համայնքի տարածքում ներառմամբ, որից հետո մի խումբ բարձրաստիճան պաշտոնյաների կողմից կառուցապատման նպատակով գնման և տնօրինման փաստին:

- Այս առանձին օրինակները ցույց են տալիս, որ չնայած այս խախտումները բացակայում են Կադաստրի պաշտոնական տվյալներում, այնուամենայնիվ, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն և նրա տարածքային մարմինները գույքի նկատմամբ իրավունքի գրանցման իրենց աշխատանքներում ցուցաբերել են անփութություն,՝ դրանով իսկ խախտելով իրենց լիազորությունների իրականացման համար սահմանված կանոնակարգերի դրույթները և տեղում չեն փաստագրել իրավիճակը:
- ՀՀ գյուղատնտեսության և ՀՀ բնապահպանության նախարարությունները չեն կատարել օրենքով իրենց վերապահված՝ «Հայաստանի Հանրապետության պետական անտառային կադաստրի վարումը, անտառային հողերի պետական հաշվառումը» գործառույթը.

II. ԱՆՏԱՌՎԵՐԱԿԱՆՔՆՈՒՄ

Ըստ «Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական տվյալների, Հայաստանում 2009-2016թթ. վերականգնվել են 971,8 հա տարածքներ, այս թվի մեջ մտնում են անտառային հողերի այրված, հատված և այլ բացասական գործոնների ազդեցությունից անտառագուրկ, նախկինում անտառածածկ տարածքները: Նույն աղբյուրի վկայակոչմամբ, 2009-2018թթ. արձանագրվել է անտառային հրդեհների 303 դեպք՝ 4903,565 հա տարածքի վրա և նույն տարիներին կատարվել են անտառվերականգնման աշխատանքներ 523,5հա անտառային տարածքում, որը կազմում է միայն հրդեհված մակերեսի 10,66%-ը:

Եթե այս տվյալների մեջ ներառված են նաև «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման և ենթակառուցվածքների կառուցման համար հատված և, այսպես կոչված, «562 հեկտար տարածքի վերականգնման» փաստը, ապա այդ տվյալների հավաստիությունը համոզիչ չեն և նույնիսկ բացասական են:

Անտառատնկման/վերականգնման աշխատանքներ չեն իրականացնում նաև փոքր ՀԷԿ-երը: Մասնավորապես, 2014-2016թթ. «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի և ՀՀ բնապահպանության նախարարության կողմից համատեղ իրականացված «Աջակցություն փոքր ՀԷԿ-երին վերաբերող բարեփոխումներին՝ գետային էկոհամակարգերի կայուն օգտագործման նպատակով հանրության և ՀՀ բնապահպանության նախարարության երկխոսության միջոցով» և 2017-2018թթ. «Աջակցություն նոր բարեփոխումներին փոքր ՀԷԿ-երի բնագավառում ՔՀԿ-կառավարություն երկխոսության միջոցով» ծրագրերի շրջանակներում ուսումնասիրված 125 ՓՀԷԿ-երը հիմնականում չեն իրականացրել՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության դրական եզրակացության նախապայման հանդիսացող անտառտնկման աշխատանքներ: Օրինակ՝ Արփա գետի վրա տեղակայված մեկ ՓՀԷԿ-ի 1550մ երկարությամբ և 1000մ տրամագծով խողովակաշարի կառուցման արդյունքում 1.4342 հա անտառային գոտու տարածքում հատվել է 442 ծառ, մի ուրիշ դեպքում՝ 434 հատ, մինչդեռ դրա փոխարեն համարժեք քանակությամբ ծառեր չեն տնկվել:

- Սևանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով ափամերձ ոչնչացված մոտ 2843,7 հա անտառների և թփուտների փոխարեն վերականգնվել են 6 հա:
- Այրված անտառային հողերի, հատված և այլ բացասական գործոնների ազդեցությունից անտառագուրկ, նախկինում անտառածածկ տարածքների վերականգնման տարածքներն աննշան են, և որ անտառվերականգնման այս տեմպերի պայմաններում շատ արագ պետությունը անդառնալիորեն կկորցնի

իր անտառային տարածքների զգալի մասը և կառերեսվի դրան հետևող բոլոր կործանարար ու բացասական հետևանքների հետ:

- «Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքում տեղադրված տվյալները շատ հին են և հնարավոր չէ այնտեղից ոլորտում տիրող ընթացիկ իրավիճակի վերաբերյալ ստանալ պատշաճ տեղեկատվություն: Այսինքն՝ տվյալները հին են, և կայքը չի ապահովում տեղեկատվության թափանցիկություն:
- ՀՀ պետական բյուջեից անտառվերականգնման համար տրամադրվում է աննշան փոքր ֆինանսավորում:
- Անտառվերականգնումը հիմնականում իրականացվում է միջազգային կառույցների կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում:
- ՀՀ կառավարությունը, անտառվերականգնման համար ֆինանսական բավարար միջոցներ չհատկացնելով, դրանով իսկ անտառների կայուն կառավարման և վերահսկողության ոլորտում պետական քաղաքականության իրականացման ապահովման պատասխանատվությունն իր վրա չի վերցնում:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԴԵԳՐԱԴԱՅԻՍ

«Հողերի և անտառների կայուն կառավարման ներդնումը հյուսիս-արևելյան Հայաստանի լեռնային լանդշաֆտներում» ՄԱԿ-ի զարգացման (No: UNDP/ARM/IC/2018/229) ծրագրի «Դեգրադացված անտառային էկոհամակարգերի վերականգնման աշխատանքների իրացման տարածքների ընտրություն և մշտադիտարկում» բաղադրիչի շրջանակներում կատարված հետազոտությունները փաստում են, որ.

- «Դիլիջան» ազգային պարկի «Հաղարծին» տեղամասի 4-րդ պահաբաժնում առկա են ապօրինի հատումների թիրախային օջախներ, որտեղ իրականացվել են ապօրինի հատումներ ինչպես 2016-2017թթ. ընթացքում, այնպես էլ 2018թ. 1-ին եռամսյակում: 2014-2017 թվականների համապատասխան արբանյակային պատկերների վերծանման և համադրման արդյունքում պարզվել է, որ «Դիլիջան» ազգային պարկի «Հաղարծին» տեղամասի տարածքում արձանագրված փոփոխությունների մակերեսը 38 հեկտար է:
- Արբանյակային պատկերների միջոցով «Հայաստան» ՊՈԱԿ-ի «Եղեգնուտի անտառտնտեսության» մասնաճյուղի տարածքում հայտնաբերվել են մոտ 200 փոփոխված տարածքներ ընդհանուր 38.8 հա մակերեսով:

- «Դսեղի անտառտնտեսության» մասնաճյուղի տարածքում մոտ 60 փոփոխված տարածքներ:
- «Զիլիզայի անտառտնտեսության» մասնաճյուղի տարածքում մոտ 30 փոփոխված տարածքներ:
- «Սևքարի անտառտնտեսության» մասնաճյուղի տարածքում մոտ 40 փոփոխված տարածքներ:
- «Ստեփանավանի անտառտնտեսության» մասնաճյուղում՝ 30, «Տաշիրի անտառտնտեսության» մասնաճյուղում՝ մոտ 20:
Այդ տարածքներում կամ իրականացվել են հատումներ, կամ բնական երևույթների պատճառով տապալված ծառեր են:
- Վնասատուներով վարակված օջախներ են բացահայտվել «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Կապանի անտառտնտեսություն» մասնաճյուղի 4 անտառապետության տարածքում: Ընդհանուր առմամբ հաշվարկվել է վարակված օջախների 7.776 հա մակերես:

Հետևություն

- Անտառային ոլորտի կառավարման կազմակերպությունները բավարար ուշադրություն չեն դարձնում անտառների դեգրադացիաների հայտնաբերման, դրանց կանխարգելման, ինչպես նաև վնասատուներից տուժած անտառի տեղամասերի վերականգնման բաղադրիչին:
- Անտառների կայուն կառավարման նկատմամբ վերահսկողության գործընթացում ոլորտում լիազորված մարմիններն այդ բաղադրիչը ռիսկային չեն գնահատում և ստուգվող կազմակերպությունում բավարար ուշադրություն չեն դարձնում դրա կատարողականին:

IV. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՈՉ ԲԱՎԱՐԱՐ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐՃԱՏՈՒՄ

ՀՀ կառավարությունն անտառային հողերի կատեգորիաների փոփոխությունների անվան տակ, տարիներ շարունակ նպաստել է ՀՀ անտառների ոչնչացմանը.

- «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից՝ Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման և ենթակառուցվածքների կառուցման համար բացառիկ գերակա հանրային շահի հիմնավորմամբ պաշտոնապես թույլ է տրվել 357 հա մակերեսով անտառի հատում, փոխարենն ընկերությունը պարտավորվել էր տնկել 714 հեկտարի անտառ, ինչն իրականում չի կատարել:

- ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ (<https://www.e-gov.am/gov-decrees/item/27620>) «Էրեբունու» անտառապետության 51 հեկտարից 24.42 հեկտար հողամասը «Հայանտառ» ՊՈԱԿ-ից հանձնվել է Երևան համայնքին Նուբարաշենի նոր աղբավայրի կառուցման համար:

- Մեղրասարի ոսկու հանքավայրի շահագործման համար «Արևիք» ազգային պարկի տարածքից 186.4հա հատկացվել է հանքը շահագործող ընկերությանը:

- «Իրան-Հայաստան 400կվ 3-րդ էլեկտրահաղորդման օղային գծի և համապատասխան ենթակայանի կառուցման ծրագրի շրջանակներում «Արևիք» ազգային պարկից հատկացվել է 4.26 հեկտար անտառային տարածք:

- ՀՀ կառավարության 2010 թվականի հուլիսի 1-ի հ.836-Ն որոշմամբ Սյունիքի անտառտնտեսության «Ողջի» տեղամասի 206հա անտառային տարածի հողի կատեգորիան փոխվել է արդյունագործական և հանքաարդյունահանման կատեգորիայի՝ այն ԶՊՄԿ-ին ամրակցելու նպատակով:

- Հանքավանի անտառի 500,0 հա հողերի կատեգորիան փոխվել է արոտավայրերի կատեգորիայի, այնուհետև, այդ տարածքները վաճառվել են մասնավոր անձանց:

- Սևանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով ավիամերձ մոտ 2843,7 հա անտառների և թփուտների ոչնչացում (ՀՀ կառավարության 2003թ. դեկտեմբերի 11-ի հ.1787-Ն որոշում):

Անտառային հողերի կատեգորիաները փոխվում են նաև փոքր ՀԷԿ-երի կառուցման գործընթացներում, մասնավորապես՝ միայն Սյունիքի մարզի Լիճք համայնքի 0.425 հա պետական սեփականություն հանդիսացող անտառային հողերից 0.15 հեկտար հողերի կատեգորիան՝ 2 փոքր ՀԷԿ-եր կառուցելու համար:

ՀՀ կառավարության 2007թ. հ.422-Ն որոշումը՝ Ծաղկաձորի անտառների շուրջ 50.48հա որպես ոչ անտառապատ ճանաչելու մասին:

Անտառաձածկ տարածքները կրճատվում են նաև հրդեհների պատճառով, պաշտոնական տվյալներով 2018 թվականի ընթացքում Անտառային կոմիտեի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 19 «անտառտնտեսություն» մասնաճյուղերում գրանցվել է հրդեհի բռնկման 40 դեպք, ինչի արդյունքում ոչնչացվել է 232,4 հա անտառային տարածք:

Փաստենք, որ. Անտառային հողերի կատեգորիաների փոփոխություններ կատարելու մասին համապատասխան որոշումներ ընդունելով, ՀՀ կառավարությունը խախտել է ՀՀ անտառային օրենսգրքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները, համաձայն որի՝ պետական անտառները և անտառային հողերը ենթակա չեն օտարման համայնքներին, իրավաբանական անձանց և քաղաքացիներին:

V. ԱՊՕՐԻՆԻ ԱՆՏԱՌՀԱՏՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՊԱՏԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԲԱՎԱՐԱՐ ՄԱԿԱՐԴԱԿ, ԱՊՕՐԻՆԻ ԱՆՏԱՌՀԱՏՈՒՄՆԵՐԻ ՀՄԿԱՅԱԿԱՆ ԾԱՎԱԼՆԵՐ

Ապօրինի անտառահատման խախտումների հայտնաբերման համար ՀՀ-ում լիազորված են՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի անտառային հսկիչ ծառայությունը, ԲՀՊՏ-ի հսկիչ ծառայությունները, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ Ոստիկանության համապատասխան ծառայությունները, Բնապահպանական պետական տեսչության (այժմ՝ Բնապահպանական և ընդերքի տեսչական մարմին) տարածքային ստորաբաժանումների և անտառների վերահսկողության բաժինները, 2017թվականից՝ նաև ՀՀ Բնապահպանության նախարարության Անտառային կոմիտեի պարեկապահակային գործառույթներ իրականացնող անտառային պետական ծառայությունը, սակայն դրանից ապօրինի անտառահատումների թիվը չի նվազում, ընդհակառակն՝ ավելանում է:

Այս բոլոր կառույցների աշխատանքի արդյունքները սակայն հեռու են ոլորտում տիրող փաստացի իրավիճակի նկարագրի գնահատման տեսանկյունից և ապօրինի հատումների հայտնաբերման և կանխարգելմանն ուղղված բավարար միտումներից:

Ի գիտություն ընդունելով հայտատուի ներկայացրած փաստերը և չկասկածելով դրանց հավաստիությանը՝ բերեմ պաշտոնական մի քանի տվյալներ.

Պաշտոնական տվյալներով ապօրինի հատված ծառերի թիվը մինչև 2016թ. կազմում էր 1500-3000 ծառ:

- Ըստ «Անտառների պետական մոնիտորինգ» ՊՈԱԿ-ի՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տարածքում ամեն տարի հայտնաբերվում է 2500-3000 անտառխախտման դեպք
- Ըստ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 2009-2013թթ. տվյալների՝ ապօրինի հատված ծառերի տարեկան միջին թիվը կազմում էր 2781 ծառ:
- Ըստ ՀՀ վիճակագրության կոմիտեի՝ 2009թ-ին ապօրինի հատվել է 1310 ծառ
- Ըստ ՀՀ Բնապահպանության նախարարության Բնապահպանական պետական տեսչության՝ 2015թ-ին հայտնաբերվել է ապօրինի հատված 2100 ծառ, 2016թ՝ 2192 ծառ;

2015թ. հայտնաբերված 442 անտառխախտման դեպքի համար ՀՀ Բնապահպանության նախարարության աշխատակազմի Բնապահպանական պետական տեսչությունը կազմել է 374 հատ վարչական տուգանքի ակտ 27,1 մլն դրամ գումարով, և հաշվարկվել **125.86** մլն. դրամ գումարի շրջակա միջավայրին հասցված վնասի հատուցման 401 արձանագրություն: Հայտնաբերվել է ապօրինի հատված 2100 ծառ:

2016թ. հայտնաբերված 513 անտառխախտման դեպքի համար ՀՀ Բնապահպանության նախարարության աշխատակազմի Բնապահպանական պետական տեսչությունը կազմել է 422 հատ վարչական տուգանքի ակտ 32.75 մլն.

դրամ գումարով և հաշվարկվել **113.75** մլն. դրամ գումարի շրջակա միջավայրին հասցված վնասի հատուցման 476 արձանագրություն: Հայտնաբերվել է ապօրինի հատված 2192 ծառ և ապօրինի տեղափոխվող 433.0 խմ վառելիքայտ:

Մասնավորապես՝

2016թ. «Հայանտառ» ՊՈԱԿ-ում բնապահպանական տեսչության կատարած ստուգման արդյունքները հետևյալն են՝

1.«Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Արծվաբերդի անտառտնտեսություն» մասնաճյուղ- Հայտնաբերված 110 ապօրինի հատված ծառի համար կազմվել է 2.2 մլն. դրամ գումարի շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցման ակտ: 2019թ/՝ միայն 2 պահաքաժնի ստուգումներով՝ 2020 ծառ, 140.968.500 դրամ:

2. «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Սյունիքի անտառտնտեսություն» մասնաճյուղ- Հայտնաբերված ապօրինի հատված 85 ծառի համար կազմվել է 1.46 մլն. դրամ գումարի շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցման ակտ: Կապանի անտառտնտեսությունում՝ 379 ծառ:

3. «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Ստեփանավանի անտառտնտեսություն» մասնաճյուղ- Հայտնաբերված 186 հատ ապօրինի հատված ծառերի համար կազմվել է 9.6 մլն. դրամ գումարի շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցման ակտ:

4.«Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Գուգարքի անտառտնտեսություն» մասնաճյուղ- Հայտնաբերված 207 հատ ապօրինի հատված ծառերի համար կազմվել է 10,872 մլն. դրամ գումարի շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցման ակտ:

5.«Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Վայոց ձորի անտառպետություն» մասնաճյուղ- Հայտնաբերված 2 հատ ապօրինի հատված ծառերի համար կազմվել է 52,5 հազար դրամ գումարի շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցման ակտ:

6.«Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Նոյեմբերյանի» մասնաճյուղ» Հայտնաբերված 94 հատ ապօրինի հատված ծառերի համար կազմվել է 2.085 մլն. դրամ գումարի շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցման ակտ:

Ապօրինի անտառհատումներ են իրականացվում նաև ԲՀՊՏ-երի անտառային տարածքներում.

- 2012 թվականին ապօրինի հատվել է 107 ծառ. որից 99 ծառ՝ «Դիլիջան» ազգային պարկում, 8-ը՝ «Խոսրովի անտառ» պետական արգելոցում:
- 2013 թվականին ապօրինի հատված ծառերի թիվը 160 է, որից 149 ծառ՝ «Դիլիջան» ազգային պարկում, 10 ծառ՝ «Սևան» ազգային պարկում և 1 ծառ՝ «Շիկահող» պետական արգելոցում:

- 2014թ. գրանցվել է 553 ապօրինի ծառահատում, որից 532-ը՝ «Դիլիջան» ազգային պարկում, 20-ը «Սևան» ազգային պարկում և 1 ծառ «Խոսրովի անտառ» պետական արգելոցում:
- 2017թ. տեսչական մարմնի ստուգումներով «Դիլիջան» ազգային պարկում հայտնաբերվել է 10 հազար ապօրինի հատված ծառ, ինչի արդյունքում պետությանը հասցվել էր 1 միլիարդ 600 մլն դրամի վնաս:
- 2018թ. «Արևիք» ազգային պարկում հատվել է 600-ից ավելի ծառ:
- 2012թ. Հայաստանից արտահանվել է 22.620 կգ փայտածուխ, ինչն ամենանվազագույն հաշվարկներով համարժեք է 188.56 խմ փայտածուխի ապրանքային որակն ապահովող վառելափայտի: Էլ չենք խոսում ներքին շուկայում վաճառվող ծավալների մասին (ի դեպ, փայտածխի արտադրությունը հիմնականում անօրինական է: Միայն Ազատամուտ գյուղում 2010 թվականին հայտնաբերվել է փայտածխի ապօրինի արտադրությամբ զբաղվող 15 կետ):

ՀՀ բնապահպանական և ընդերքի տեսչական մարմնի 2018-2019թթ. հրապարակած շաբաթական հաշվետվությունների թվերը փաստում են, որ հայտնավերված ապօրինի ծառահատումների արդյունքում շրջակա միջավայրին և բնությանը պատճառված վնասների գումարի չափը տարեկան ամենանվազագույնը կազմում է 240,0 մլն. դրամ:

Անհրաժեշտ է նշել, որ վերջին տարում բարձրացել է հսկող և վերահսկող կառույցների աշխատանքի արդյունավետությունը: Եթե նախկինում տեսչությունն ամեն տարի հայտնաբերում էր 2000-3000 ապօրինի հատված ծառ, ապա 2018թ. վերջին միայն «Կապանի անտառտնտեսության» ստուգումների արդյունքում հայտնաբերվել է 379 ապօրինի հատված ծառ: Նույն քանակի ծառ են հայտնաբերվել նաև 2019թ. մարտ ամսին «Հայանտառ» ՊՈԱԿ-ի հսկիչները 10 օրում /9 անտառտնտեսության տարածքում/: Այսինքն՝ նախորդող տարիներին «Հայանտառ» ՊՈԱԿ-ի և ԲՀՊՏ-ի տարածքներում միասին վերցված հայտնաբերված ապօրինի ծառերի թիվն աճել է 37,9%-ով:

Համադրելով Հայաստանում սպառված և օրինական հատումներով մթերված վառելափայտի ծավալների վերաբերյալ անգամ պաշտոնական թվերը՝ ստացվում է, որ տարեկան սպառվում է մթերվածից 20-33,5 անգամ ավելի վառելափայտ: (Ըստ 2010թ. «Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից բնակչության շրջանում կատարված սոցիալոգիաների՝ սպառված վառելափայտի պահանջարկը առավել քան 20 անգամ գերազանցում է օրինական հատումներից իրացված փայտանյութի ծավալը (35171 խմ): Ճշտված տվյալներով ՀՀ-ում տվյալ տարում փաստացի իրացված փայտանյութի ծավալները օրինական հատումներից գոյացած փայտանյութի ծավալները գերազանցում է 33,5 անգամ:)

Ապօրինի անտառհատումների այս հսկայական չափերի պատճառները բազմաթիվ են՝

- Հսկող-վերահսկող ծառայությունների անբարեխիղճ, անբավարար աշխատանք
- Անտառային տարածքներում 24-ժամյա հսկողություն կազմակերպելու համար «Հայանտառ» ՊՈԱԿ-ի և ԲՀՊՏ-ների ֆինանսական կարողությունների սուղ միջոցներ
- Համակարգում առկա կոռուպցիա և հովանավորչություն, / ինչը հաստատում ապօրինի անտառհատումներով հարուցված քրեական գործերը: Հարուցված են պատկան մարմինների ներկայացուցիչների հովանավորչությամբ, պաշտոնեական լիազորությունները չարաշահելու, կաշառք ստանալու, կաշառք տալու բազմաթիվ գործեր: Բերենք միայն 2019թ. հարուցված մի քանի գործերի օրինակներ
 - ✓ 2019թ. «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Ստեփանվանի անտառտնտեսության» մասնաճյուղում տեղի ունեցած ապօրինի ծառահատումներ, (191 հատ տարբեր տեսակի և տրամագծերի ծառեր՝ պետությանը հասցված վնասը՝ 11.877.000 ՀՀ դրամ),
 - ✓ 2019թ. մարտի 4-ին առանձնապես խոշոր չափի յուրացում կատարելու և խոշոր չափի կաշառք ստանալու կասկածանքով «Հայանտառ» ՊՈԱԿ Հրազդանի մասնաճյուղի տնօրենի ձերբակալում (27 միլիոն ՀՀ դրամ գումարի յուրացում),
 - ✓ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Ճամբարակի անտառտնտեսության» քրեական գործով ձերբակալված երկու անտառապետ (Նախնական տվյալներով՝ 2015 թվականի հուլիսի 1-ից մինչև 2018 թվականի օգոստոսի 3-ն ընկած ժամանակահատվածում ապօրինի հատված 504 ծառեր՝ 85.749.000 ՀՀ դրամի գույքային վնաս):/

• Ինստիտուցիոնալ հարցեր

ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2017թ. փետրվարի 1-ի «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրագրված անտառներում 2017թ. իրականացվելիք խնամքի և սանիտարական հատումների ծավալները հաստատելու մասին» հ.20-Ա հրամանով, վկայակոչելով ՀՀ անտառային օրենսգրքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի (3. Բնափայտի մթերումն իրականացվում և տարեկան հաշվարկային հատատեղերը որոշվում են անտառաշինական նախագծերի հիման վրա: Անտառաշինական նախագծերի բացակայության կամ ժամկետանց ճանաչվելու դեպքում բնափայտի մթերումն իրականացվում է պետական կառավարման լիազորված մարմնի ստեղծած մասնագիտական հանձնաժողովների փաստացի ուսումնասիրությունների և եզրակացությունների հիման վրա) դրույթները,

հաստատել է 2017թ. անտառհատումների 10.780իւմ ծավալ: Նույն թվականի նոյեմբերի 16-ին ՀՀ գյուղատնտեսության նախարարը հ.253-Ա հրամանով դադարել է ՀՀ կառավարության կողմից հաստատված անտառկառավարման պլանների գործածությունը և 2018թ. համար սահմանել է 44.279իւմ ընդհանուր ծավալով հատումների չափաքանակ: Ինչքանով էն իրավաչափ այս կամ նախորդ հրամանները, դա այլ հարց է: Համենայնդեպս, 2017թ. «Հայանտառ» ՊՈԱԿ-ի՝ ՀՀ բնապահպանության ենթակայության անցնելուց հետո անտառհատումների տարեկան ծավալների հաստատման վերաբերյալ գերատեսչական ակտերը և 2018 թվականի անտառօգտագործման տարեկան ծավալների մասին հաշվետվությունները բացակայում են ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական կայքում:

ԱՆՏԱՌՆԵՐԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՀԱՏՈՒՄԸ ՀԱՆԳԵՑՐԵԼ Է.

- բուսական ծածկի ոչնչացման,
- արոտավայրերի չկանոնակարգված շահագործման,
- կլիմայի փոփոխության
- երկրի շուրջ 80 % -ի անապատացման նպաստմանը (որից 30 %-ը առավել խիստ անապատացված տարածքներն են):
- էկոհամակարգերի ջրակարգավորիչ ֆունկցիաների կորստների
- աղբուրների, փոքր լճակների, ջրաճահճային այլ տարածքների չորացման
- հիդրո- և մեգոֆիլ տեսակների քանակի նվազման
- անտառային տարածքների կրճատումը և դեգրադացիան, ջրային էկոհամակարգերի ջրանցողության խախտումը, ճահիճների չորացումը, թափոնակույտերի առաջացումը նպաստել են բնական աղետների թվի աճին:

ԱՆՏԱՌՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԾԱԳԱԾ ԽՆԴՐԻՐՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է՝

1. ՀՀ անտառների կայուն կառավարման և զարգացման ոլորտի համար մշակել և ընդունել նոր հայեցակարգ՝ հիմք ընդունելով շրջակա միջավայրի ու դրա բաղադրիչների պաշտպանությունը: Ապահովել ոլորտում պետական քաղաքականության ապահովման ֆինանսական հնարավորությունները:
2. Ընդունել անտառների կայուն կառավարման ոլորտի պետական մարմինների համակարգված, փոխկապակցված և արդյունավետ գործունեությունը համակարգող ենթաօրենսդրական ակտ:
3. Խստացնել ապօրինի անտառհատումների կանխարգելմանն ուղղված վերահսկողությունը:
4. Կատարել ապօրինի անտառհատումների պատասխանատվության խստացման հետ կապված օրենսդրական բարեփոխումներ:

5. Իրականացնել անտառամերձ համայնքներում դրամաշնորհային տարբեր ծրագրեր՝ ջերմոցային տնտեսությունների հիմնման, քաղաքացիներին եկամտի աղբյուրներով ապահովելու, էկոտուրիզմի զարգացման և այլ ուղղություններով:

6. Ամրագրել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եզրակացությունում՝ ՓՀԷԿ-երի կառուցման հետևանքով հատված ծառերի փոխարեն կրկնակի քանակությամբ ծառատունկի պարտադիր պահանջ:

7. Ստեղծել անտառներում 24-ժամյա հսկողություն իրականացնելու հնարավորություններ:

8. Ստեղծել և բարեկարգել անտառային ճանապարհային ցանցը:

9. Համալրել հրդեհների մարման համապատասխան տեխնիկական միջոցներով:

10. Կանոնակարգել արտավայրերի շահագործումը:

6. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստեր.

Սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները հետևյալն են.

- Անտառների՝ 1993թ. հաշվառման /գույքագրման/ համաձայն անտառային ֆոնդը կազմել է՝ 459.9 հազ. հա, ինչը կազմում է Հայաստանի 11,2%-ը: 2001 թվականին ՆԱՄԱ-ի տիեզերքից կատարած տվյալների համաձայն Հայաստանի տարածքում անտառը զբաղեցնում է 246,099հա:
- Անտառների արդյունավետության միջին ցուցանիշը /բոնիտետը/ եղել 3,6, իսկ այժմ 3-ից ցածր է:
- Անտառների միջին լրիվությունը եղել է 0,55, այժմ՝ 0,3 /դա արդեն անտառ չէ, այլ նոսրուտներ են/:
- Փոխվել է անտառների տեսակային կազմը՝ բարձրատեսակ հաճարենու, կաղնու անտառները վերածվել են ցածրատեսակ բոխուտների և դաժուտների:
- Հայաստանում մեկ մարդուն բաժին ընկնող կանաչ տարածքը 0,1հա է, իսկ ԱՊՀ երկրներում 27 անգամ ավել է՝ 2,7հա:
- Վերջին տարիներին «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից տրվում է սանիտարական և խնամքի հատումների թույլտվություն տարեկան 35-45հազ. մ³: Սակայն, յուրաքանչյուր տարի ապօրինի հատվում է մոտ 20 անգամ ավելի:
- Ապօրինի անտառահատումներից ստացված փայտանյութն օգտագործվում է որպես՝
 - վառելիքայտ /4-5 հոգուց բաղկացած ընտանիքը օգտագործում է 10-15 մ³/
 - արդյունաբերական նպատակներով /կահույքագործություն, շինափայթ, փայտածուխ, այլ/
 - արտահանում

- Ապօրինի ծառահատումների դեպքերի բացահայտումները շատ քիչ են, սակայն նույնիսկ բացահայտված դեպքերով էլ չի հաջողվում ամբողջությամբ բռնագանձել պատճառված վնասը և բոլոր մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկել: Այսպես, ըստ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տվյալների.

2009թ.- հայտնաբերվել է 3461 հատ ապօրինի հատված ծառ

2010թ.- հայտնաբերվել է 3472 հատ ապօրինի հատված ծառ

2011թ. - հայտնաբերվել է 3081 հատ ապօրինի հատված ծառ

2012թ.- հայտնաբերվել է 1860 հատ ապօրինի հատված ծառ

2013թ.- հայտնաբերվել է 2031 հատ ապօրինի հատված ծառ

2015թ.- հայտնաբերված 442 անտառխախտման դեպքի համար ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչությունը կազմել է 374 հատ վարչական տուգանքի ակտ 27,1մլն. դրամ գումարով և հաշվարկվել 125.86մլն. դրամ գումարի շրջակա միջավայրին հասցված վնասի հատուցման 401 արձանագրություն: Հայտնաբերվել է ապօրինի հատված 2192 ծառ և ապօրինի տեղափոխվող 433.0 խմ վառելափայտ:

2016թ. հայտնաբերված 513 անտառխախտման դեպքի համար ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչությունը կազմել է 422 հատ վարչական տուգանքի ակտ 32.75 մլն. դրամ գումարով և հաշվարկվել 113.75մլն. դրամ գումարի շրջակա միջավայրին հասցված վնասի հատուցման 476 արձանագրություն: Հայտնաբերվել է ապօրինի հատված 2192 ծառ և ապօրինի տեղափոխվող 433.0 խմ վառելափայտ:

Մասնավորապես՝

2016թ. «Հայանտառ» ՊՈԱԿ-ում Բնապահպանական տեսչության կատարած ստուգման արդյունքները հետևյալն են՝

- **«Արձվաբերդի անտառտնտեսություն» մասնաճյուղ-** հայտնաբերված 110 ապօրինի հատված ծառի համար կազմվել է 2.2 մլն. դրամ գումարի շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցման ակտ:
- **«Սյունիքի անտառտնտեսություն» մասնաճյուղ-** հայտնաբերված ապօրինի հատված 85 ծառի համար կազմվել է 1.46մլն. դրամ գումարի շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցման ակտ:
- **«Ստեփանավանի անտառտնտեսություն» մասնաճյուղ-** հայտնաբերված 186 հատ ապօրինի հատված ծառերի համար կազմվել է 9.6 մլն. դրամ գումարի շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցման ակտ:

- **«Գուգարքի անտառտնտեսություն» մասնաձյուղ**- հայտնաբերված 207 հատ ապօրինի հատված ծառերի համար կազմվել է 10,872 մլն. դրամ գումարի շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցման ակտ:
- **«Վայոց ձորի անտառպետություն» մասնաձյուղ**-հայտնաբերված 2 հատ ապօրինի հատված ծառերի համար կազմվել է 52,5 հազար դրամ գումարի շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցման ակտ:
- **«Նոյեմբերյանի» մասնաձյուղ** - հայտնաբերված 94 հատ ապօրինի հատված ծառերի համար կազմվել է 2.085մլն. դրամ գումարի շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցման ակտ:
- 2017-2018 թվականների ընթացքում ապօրինի հատվել է 28 հազար ծառ և պատճառվել 2 մլրդ 200 մլն դրամի վնաս:
- Անտառամերձ գյուղերի յուրաքանչյուր ընտանիք կարող է անվճար ստանալ 8մ³ թափուկ՝ առանց վերավաճառման իրավունքի, սակայն դրա սակավ լինելու և անհասանելի վայրերում գտնվելու պատճառով չի բավարարվում բոլոր բնակիչների պահանջարկը:
- Հայաստանի բնակչության սոցիալական ծանր վիճակն առաջացրել է վառելիափայտի մեծ պահանջարկ, ինչն ուղղակի անդրադառնում է անտառների վիճակի, պահպանության և կառավարման վրա:
- «Հայանտառ»-ը, հանդիսանալով ՊՈԱԿ, ի վիճակի չէ իրականացնել անտառների արդյունավետ կառավարում և պահպանություն:
- Անտառտնտեսությունները չեն հանդիսանում իրավաբանական անձ, ինչը նույնպես խոչընդոտում է արդյունավետ տնտեսվարում և կառավարում իրականացնելուն:
- Բացակայում է բավարար ֆինանսավորում պետական բյուջեից, չեն տրամադրվում գումարներ անտառտնկման, անտառպաշտպանության և խնամքի համար: Այսպես, Հայաստանի Հանրապետության 2013-2015 թվականների անտառապահպանական ծառայությունների ծրագրի իրականացման համար (2013-2015թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի հայտով) 2013 թվականին պահանջվել է 1095723,0 հազ. դրամ, սակայն, պետական բյուջեով նախատեսվել է 717973,1 հազ. դրամ, 2014 թվականին՝ 1140104,0 հազ. դրամ է պահանջվել, սակայն պետական բյուջեով նախատեսվել է 732757,1հազ. դրամ, 2015 թվականին՝ 1186075,0 հազ. դրամ, սակայն, պետական բյուջեով նախատեսվել է 875928,5 հազ. դրամ:

- Անտառային տարածքների կրճատման պատճառով, լուծարվել են անտառտնտեսություններ: Այսպես, 2014թ. լուծարվել է Երևանի անտառտնտեսությունը: Կառուցվածքային փոփոխությունների արդյունքում ՀՀ գյուղատնտեսության նախարարի 18.03.2014թ. հ.73-Ա հրամանով «Երևանի անտառտնտեսություն» մասնաձյուղը լուծարվել է, և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրենի 18.03.2014թ. հ.73-Ա հրամանով «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կառուցվածքում ստեղծվել է Երևանի անտառային հողերի կառավարման բաժին: Հետագայում, Երևանի անտառային հողերի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրենի 17.08.2016թ. N39 հրամանով վերը նշված բաժինը վերակազմավորվել է Երևանի անտառային հողերի կառավարման տեղամասի և միացել «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաձյուղին: Երևանի անտառտնտեսության բազմաթիվ տարածքներում փոխվել է անտառային հողերի նպատակային նշանակությունը, այդ իսկ պատճառով հստակեցված չեն Երևանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից կառավարվող անտառային նշանակության հողերի սահմանները:
- Մինչ Երևանի անտառտնտեսության լուծարումը, ՀՀ կառավարության 2011թ. մայիսի 5-ի որոշմամբ (<https://www.e-gov.am/gov-decrees/item/19476/>) պետական պահուստային ֆոնդից 59 միլիոն դրամ հատկացվել է ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամին «Երևանի անտառտնտեսության» «Էրեբունու» անտառապետության 51 հեկտար տարածքի անտառապատման աշխատանքների, ոռոգման ցանցի անցկացման, ցանկապատման համար: 2016թ-ին ՀՀ կառավարության մեկ այլ որոշմամբ (<https://www.e-gov.am/gov-decrees/item/27620/>) «Էրեբունու» անտառապետության 51 հեկտարից 24.42 հեկտար հողամասը «Հայանտառ» ՊՈԱԿ-ից վերցվել և տրվել է Երևան համայնքին՝ Նուբարաշենի նոր աղբավայրի կառուցման համար: Իսկ ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամը լուծարվել է: «Էրեբունու» անտառապետությունում տնկված ծառերը անտառի շարք չեն տեղափոխվել: Դրանց մեծ մասը չորացել է՝ ոռոգման ջրի բավարար չլինելու պատճառով: Փաստորեն, պետական պահուստային ֆոնդի 59 միլիոն դրամը փոշիացվել՝ իր նպատակին չի ծառայել և որևէ մեկը դրա համար պատասխանատվություն չի կրել:
- «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից՝ Թեղուտի պղնձամուլիբդենային հանքավայրի շահագործման և ենթակառուցվածքների կառուցման համար, գերակա պետական շահի հիմնավորմամբ, պաշտոնապես թույլ է տրվել 357հա մակերեսով /իրականում հատվել է ավել/ անտառի հատում, փոխարենն ընկերությունը պարտավորվել է տնկել 714 հեկտարի անտառ, ինչն իրականում չի կատարել:

- Հատուկ պահպանվող բնական տարածք համարվող՝ «Արևիք» ազգային պարկի տարածքից հատկացվել է Մեղրասարի ոսկու հանքավայրի շահագործման համար 186.4հա և «Իրան-Հայաստան 400կվ 3-րդ էլեկտրահաղորդման օդային գծի և համապատասխան ենթակայանի կառուցման համար՝ 4.26 հեկտար անտառային տարածք;
- ՀՀ կառավարության 2010 թվականի հուլիսի 1-ի հ.836-Ն որոշմամբ Սյունիքի անտառտնտեսության «Ողջի» տեղամասի 206 հա անտառային ֆոնդի հողի կատեգորիան փոխվել է արդյունագործական և հանքաարդյունահանման կատեգորիայի՝ այն ԶՊՄԿ-ին ամրակցելու նպատակով;
- Հանքավանի անտառի 500,0 հա հողերի կատեգորիան փոխվել է արոտավայրերի կատեգորիայի, այնուհետև, այդ տարածքները վաճառվել են մասնավոր անձանց;
- Սևանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով ափամերձ մոտ 2843,7 հա անտառներ և թփուտներ ոչնչացվել են (ՀՀ կառավարության 2003թ. դեկտեմբերի 11-ի հ.1787-Ն որոշում);
- Ծաղկաձորի անտառների շուրջ 50.48հա ճանաչվել է որպես ոչ անտառապատ, փոխվել է նաև Կոտայքի մարզի մի շարք համայնքների տարածքում գտնվող անտառային ֆոնդի հողերի կատեգորիան՝ ՀՀ կառավարության 2007թ. հ.422-Ն որոշման համաձայն;
- Անտառածածկ տարածքները կրճատվում են նաև հրդեհների պատճառով, պաշտոնական տվյալներով 2018 թվականի ընթացքում Անտառային կոմիտեի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 19 «անտառտնտեսություն» մասնաճյուղերում գրանցվել է հրդեհի բռնկման 40 դեպք, ինչի արդյունքում ոչնչացվել է 232,4հա անտառային տարածք:
- Անտառային տարածքները ոչնչանում են անտառային հրդեհների /դիտավորյալ և անզգույշ/ պատճառով:
- ՀՀ քննչական կոմիտեում 2015թ-ին՝ ՀՀ քր.օր. 281-298-րդ հոդ. նախատեսված դեպքերով քննված գործերից դատարան է ուղարկվել 18 քրեական գործ, որից 9-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածով, իսկ 2016թ-ին՝ համապատասխանաբար 12 և 6: Ինչպես երևում է ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի տեսակարար կշիռը շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների ընդհանուր թվի մեջ և՛ 2015թ.-ին, և՛ 2016թ.-ին, կազմում է 50%:
- Կարճված քրեական գործերի վերաբերյալ վիճակագրությունը հետևյալն է. 2015թ-ին շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերով քննված գործերից կարճվել է 39 քրեական գործ, որից՝ 13-ը ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածով, իսկ 2016թ-ին՝ համապատասխանաբար 29 և 22: Ինչպես երևում է, ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի տեսակարար կշիռը շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների ընդհանուր թվի մեջ (կարճված գործերի առումով) նույնպես բարձր է և կազմում է 2015թ. 33%, իսկ 2016թ.՝ 76%:

7. Դատարանի իրավական վերլուծությունը

Լսելով դիմումատուի, վկաների, տուժողների բացատրությունները և փորձագետի եզրակացությունը, հետազոտելով գործում առկա ապացույցները՝ դատարանն եկավ հետևյալ եզրահանգման.

1. ՀՀ Անտառային օրենսգրքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «2. Պետական անտառները և անտառային հողերը ենթակա չեն օտարման համայնքներին, իրավաբանական անձանց և քաղաքացիներին»: Մինչդեռ, գործի քննությամբ պարզվեց, որ բազմաթիվ են դեպքեր, երբ անտառային ֆոնդի հողերի, այդ թվում՝ հատուկ պահպանվող բնական տարածքների, կատեգորիան փոխվել է և դրանք օտարվել են ֆիզիկական կամ իրավաբանական անձանց:

2. ՀՀ անտառային օրենսգրքի 14-րդ հոդ. 1-ին մասի համաձայն. «1. Անտառաշինությունը անտառների կայուն կառավարման հիմքն է:» ՀՀ անտառային օրենսգրքի 15-րդ հոդվածի համաձայն. «1. Անտառաշինության ընթացքում անտառային տնտեսության վարման նպատակով կազմվում են համապատասխան նախագծեր, որոնք տալիս են անցած ժամանակաշրջանի համար անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման ամբողջական գնահատականը, ինչպես նաև անտառային տնտեսության վարման առաջիկա 10 տարիներին իրականացվելիք միջոցառումները:

2. Անտառաշինական նախագծերի մշակման հրահանգը հաստատում է պետական կառավարման լիազորված մարմինը:

3. Անտառաշինական նախագծերը պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատվելուց հետո համարվում են անտառային տնտեսության վարման ընթացիկ և հեռանկարային պլանավորման պարտադիր տեխնիկական փաստաթղթեր»: Սակայն, այժմ անտառտնտեսությունները չունեն հաստատված անտառաշինական նախագծեր, հետևաբար, անտառը չի կառավարվում և ցանկացած գործունեություն անտառում առանց անտառաշինական նախագծի անօրինական է:

3. Հայաստանի պետական անտառները պաշտպանական և հատուկ նշանակության անտառներ են: ՀՀ անտառային օրենսգրքի 11-րդ հոդ. 2-րդ մասի համաձայն. «2. Պաշտպանական նշանակության անտառներում արգելվում է անտառավերականգնման հատումների իրականացումը: ՀՀ անտառային օրենսգրքի 12-րդ հոդ. 2-րդ մասի համաձայն. «2. Հատուկ նշանակության անտառներում սահմանափակվում և արգելվում են անտառօգտագործման այն ձևերը, որոնք չեն համապատասխանում այդ տարածքների պահպանության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ռեժիմին»: Սակայն, գործի քննությամբ պարզվեց, որ ապօրինի անտառհատումների ծավալները գերազանցում են սանիտարական հատումների թույլատրված սահմանները: ՀՀ անտառային

օրենսգրքի 36-րդ հոդ. 2-րդ մասի համաձայն. «2. Պաշտպանական և հատուկ նշանակության անտառներում բնափայտի մթերումն իրականացվում է միջանկյալ (խնամքի) և սանիտարական հատումների արդյունքում, բացառությամբ պետական արգելոցների»: ՀՀ անտառային օրենսգրքի 25-րդ հոդ. 2-րդ մասի համաձայն. «2. Սանիտարական հատումների անհրաժեշտությունը և ծավալները պետք է հիմնավորվեն անտառապաթոլոգիական ուսումնասիրությունների կամ մոնիթորինգի արդյունքում ստացված տվյալների հիման վրա»: Ինչը նույնպես չի արվում, այլ յուրաքանչյուր տարվա համար սահմանվում են սանիտարական հատումների ծավալներն առանց համապատասխան հիմնավորումների, «կենսունակությունը կորցրած կամ ցցաչոր և չորացած ծառերի» փոխարեն հատվում են առողջ և կենսունակ ծառերը:

4. ՀՀ անտառային օրենսգրքի 19-րդ հոդ. համաձայն. «Անտառային տնտեսություն վարող անձինք պարտավոր են.

ա) ապահովել անտառային հողերի նպատակային օգտագործումն ու պահպանումը.

բ) ապահովել անտառների վերականգնումը և անտառագուրկ տարածքների անտառապատումը, դրանց արտադրողականության բարձրացմանն ու անտառային պաշարների արդյունավետ օգտագործմանն ուղղված միջոցառումների իրականացումը.

գ) իրականացնել անտառային հրդեհների հայտնաբերումն ու կանխումը, հակահրդեհային անվտանգության միջոցառումները, անտառների վնասատուների և հիվանդությունների վնասակարության կանխարգելումը.

դ) ապահովել անտառների ջրապաշտպան, հակաէրոզիոն, սանիտարահիգիենիկ, առողջարարական և այլ օգտակար հատկությունների պահպանումը.

ե) նպաստել կենսաբազմազանության պահպանությանն ու վերարտադրությանը»:

Անտառների պետական կառավարման մարմինների կողմից ոչ պատշաճ են կատարվում նշված պարտավորությունները, կամ դրանք խախտվում են ՀՀ կառավարության անօրինական որոշումներով:

5. ՀՀ անտառային օրենսգրքի 21-րդ հոդ. 3-րդ մասի համաձայն. «3. Անտառային հողերի հարակից տարածքներում օբյեկտների նախագծումը, տեղաբաշխումը, շինարարությունը և գործարկումը պետք է ապահովեն անտառների վիճակի վրա բացասական ազդեցությունների կանխարգելումը: Տարածքների անտառային հողերին հարակից լինելը որոշվում է տվյալ գործունեության բնապահպանական փորձաքննության հիման վրա»: Այս դրույթը գրեթե չի կիրառվում բնապահպանական փորձաքննություն իրականացնելիս, և հաճախ փորձաքննական դրական եզրակացություններ են տրվում անտառային էկոհամակարգերի վրա բացասական ազդեցություն ունեցող նախագծերին /օր. Թեղուտի և այլ հանքավայրերի, ՓՀԵԿ-երի և այլ/:

6. ՀՀ անտառային օրենսգրքի 26-րդ հոդ. 4-րդ մասի համաձայն. «4. Անտառային պետական ծառայության պաշտոնատար անձինք իրավունք ունեն՝

ա) իրենց իրավասության սահմաններում կազմելու արձանագրություններ անտառային օրենսդրության խախտումների մասին.

բ) ծառայողական պարտականությունները կատարելիս կրելու և օգտագործելու հրազեն, հատուկ միջոցներ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

գ) ապահովվելու ծառայության իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական այլ միջոցներով.

դ) կրելու սահմանված կարգի համազգեստ, որը տրվում է անվճար:» Սակայն, անտառապահներին չի տրամադրվում զենք, համազգեստ, անհրաժեշտ տեխնիկական միջոցներ: Չեն տրամադրվում նաև ՀՀ անտառային օրենսգրքի 27-րդ հոդվածով սահմանված սոցախլական և այլ երաշխիքներ:

7. ՀՀ անտառային օրենսգրքի 57-րդ հոդվածի համաձայն. «Պետական անտառների պահպանության, պաշտպանության, վերականգնման և անտառապատման, անտառային հրդեհների դեմ պայքարի միջոցառումների ֆինանսավորումը նախատեսվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային մասում՝ կատարվող աշխատանքների ծախսերի նորմատիվներին համապատասխան՝ բյուջետային օրենսդրությամբ սահմանված կարգով»: Սակայն, բյուջեից չի տրամադրվում նշված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ միջոցներ, արդյունքում՝ դրանք կամ չեն կատարվում, կամ ոչ պատշաճ են կատարվում:

8. ՀՀ կառավարության «Պետական անտառային հողերում անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման հետ չկապված աշխատանքների իրականացման կարգը սահմանելու մասին» 2007թ-ի օգոստոսի 30-ի հ.1045-Ն որոշման 8-րդ կետի 8.1 ենթակետով սահմանված է, որ և անտառօգտագործման հետ չկապված աշխատանքների իրականացման դեպքում դիմումատուն երեք ամսվա ընթացքում լիազորված պետական մարմնի համաձայնեցմանն է ներկայացնում անտառային տնտեսությանը հասցվող վնասի հատուցման վերաբերյալ ծրագիր, որը ներառում է օգտագործման տրամադրվող անտառային տարածքի առնվազն կրկնապատիկի չափով անտառապատման աշխատանքների իրականացման նախագիծը և անտառապատման ժամանակացույցը:

Նույն որոշման 8-րդ կետի 8.2. ենթակետով սահմանված է, որ Ծրագիրն իրականացվում է դիմումատուի ֆինանսական միջոցների հաշվին, իսկ Ծրագրի իրականացման ավարտ է համարվում անտառապատման ընթացքում հիմնադրված անտառտնկարկները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով **անտառի շարք փոխադրելու օրը**: Սակայն, այդ որոշման պահանջները չեն կատարվում, 2007թ-ից ի վեր չկա մի դեպք, որ կրկնակի չափով

անտառվերականգնում կատարվի, իսկ Կառավարությունը հետևողան չէ, այդ որոշման կատարումը վերահսկելու առումով:

9. ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված է քրեական պատասխանատվություն ՀՀ անտառային և բնապահպանական օրենսդրության խախտման համար: Մասնավորապես.

- ՀՀ քրեական օրենսգրքի 295-րդ հոդվածի համաձայն. «Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված օրգանիզմների բնակության անհետացող կամ հազվագյուտ վայրերը ոչնչացնելը, որը դիտավորությամբ կամ անզգուշությամբ առաջացրել է այդ օրգանիզմների ամբողջական պոպուլյացիաների բնաջնջում (մահ)՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից վեցհարյուրապատիկի չափով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:

- ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի համաձայն. «1. Անտառային ֆոնդի տարածքներում, ինչպես նաև անտառային ֆոնդի մեջ չմտնող տարածքներում կամ հատումներն արգելված ծառերը, թփերը հատելը կամ ոչնչացնելը, պետական կամ մասնավոր սեփականություն համարվող բուսածածկը ոչնչացնելը կամ մինչև աճի դադարեցման աստիճանի վնասելը, եթե այդ գործողությունները զգալի վնաս են պատճառել՝ պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:

2. Նույն արարքները, որոնք կատարվել են՝

1) պաշտոնական դիրքն օգտագործելով,

2) բնության հատուկ պահպանվող տարածքներում,

3) խոշոր վնաս պատճառելով,

4) Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված

ծառատեսակների կամ բուսածածկի նկատմամբ՝

5) *(կետն ուժը կորցրել է 23.05.11 ՀՕ-143-Ն)*

պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

3. Նույն արարքները, որոնք առաջացրել են առանձնապես խոշոր վնաս՝

պատժվում են կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով՝ որոշակի

պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

4. Սույն հոդվածում զգալի վնաս է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկը չգերազանցող գումարը (արժեքը), խոշոր վնաս է համարվում չորսհարյուրապատիկից յոթհարյուրապատիկը չգերազանցող գումարը (արժեքը), առանձնապես խոշոր վնաս է համարվում յոթհարյուրապատիկը գերազանցող գումարը (արժեքը):

- ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի համաձայն. «1. Անտառներ, ինչպես նաև անտառային ֆոնդի մեջ չմտնող տնկարկներ ոչնչացնելը կամ վնասելը, որը կատարվել է կրակի, պայթուցիկ նյութերի կամ առավել վտանգի այլ աղբյուրի հետ անզգույշ վերաբերմունքի արդյունքում, և եթե այդ գործողությունները խոշոր վնաս են պատճառել պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:
2. Անտառներ, ինչպես նաև անտառային ֆոնդի մեջ չմտնող տնկարկներ ոչնչացնելը կամ վնասելը, որը կատարվել է հրդեհման կամ հանրավտանգ այլ եղանակով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից ութ տարի ժամկետով»:
- ՀՀ քրեական օրենսգրքի 298-րդ հոդվածի համաձայն. «Արգելոցների, արգելավայրերի, ազգային պարկերի, բնության հուշարձանների և պետության կողմից հատուկ պահպանվող բնական այլ տարածքների կամ օբյեկտների ռեժիմը խախտելը, որը դիտավորությամբ կամ անզգուշությամբ առաջացրել է էական վնաս՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:

10. Հարուցված քրեական գործերով չեն հայտնաբերվում բոլոր մասնակիցները, մասնավորապես պատվիրատուները և որպես կանոն պատասխանատվության են ենթարկվում ցածր և միջին օղակի անձինք, շատ գործեր անհիմն կարճվում են: Բնությանը և պետությանը պատճառված վնասը որպես կանոն չի վերականգնվում՝ դատապարտված անձանց անվճարունակության պատճառով:

11. Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է մի շարք միջազգային կոնվենցիաներ և ստանձնել պարտավորություններ. Մասնավորապես.

- «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակության

մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» /Օրհուս/ Կոնվենցիայի 3-րդ հոդվածով սահմանված է, որ յուրաքանչյուր Կողմ ընդունում է անհրաժեշտ օրենսդրական, կանոնակարգող և այլ միջոցներ, ներառյալ միջոցներ՝ ուղղված սույն կոնվենցիայի տեղեկատվության մատչելիությանը, հասարակայնության մասնակցությանը, արդարադատության մատչելիության դրույթների իրականացումը կարգավորող նորմերի համատեղելիությանը, ինչպես նաև պատշաճ միջոցներ՝ ուղղված այդ դրույթների կիրառման ապահովմանը՝ սույն Կոնվենցիայի դրույթների իմպլեմենտացիայի նպատակով՝ հստակ, թափանցիկ և համաձայնեցված դաշտ ձևավորելու համար:

- «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանման մասին» /Բեռն/ կոնվենցիայի, 5-րդ հոդվածով սահմանված է, որ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է ձեռնարկի համապատասխան և անհրաժեշտ օրենսդրական ու վարչական միջոցներ՝ 1-ին հավելվածում նշված վայրի ֆլորայի տեսակների հատուկ պահպանությունն ապահովելու նպատակով: Պետք է արգելվի նման բույսերը դիտավորությամբ պոկելը, հավաքելը, կտրելը կամ արմատախիլ անելը:
- ՄԱԿ –ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի շրջանակներում ընդունված «Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողությունները/ներդրումը» (INDC) փաստաթղթով (ՀՀ կառավարության 10.09.15թ. հ.41-Ա որոշում) Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունը՝ մինչև 2050 թվականը երկրի անտառապատվածությունը հասցնել 20.1%-ի, կատարելու համար: Նախատեսված է «երկրի արտաքին պարտք-բնություն» հաշվանցման մեխանիզմ՝ անտառի վերականգնման համար, ինչը անհրաժեշտ է կիրառել:
- «Կենսաբանական բազմազանության մասին» Կոնվենցիայի 14-րդ հոդվածի համաձայն. «1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, որքանով դա հնարավոր և նպատակահարմար է.

ա/ համապատասխան ընթացակարգեր է ներդնում, որոնց համաձայն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում է պահանջվում իր կողմից նախատեսվող ծրագրերի նկատմամբ, որոնք կարող են զգալի բացասական ազդեցություն գործել կենսաբանական բազմազանության վրա՝ այդպիսի ազդեցության հետևանքները կանխատեսելու և նվազեցնելու նպատակով, և, նպատակահարմարության դեպքում, ապահովում է այդպիսի ընթացակարգերի իրականացմանը հանրության մասնակցության հնարավորությունը,

բ/ համապատասխան միջոցներ է ձեռնարկում ապահովելու համար իր կողմից իրականացվող այն ծրագրերի և քաղաքականության էկոլոգիական հետևանքների հաշվի առնելը, որոնք կարող են զգալի

բացասական ազդեցություն գործել կենսաբանական բազմազանության վրա»:

- «Անապատացման դեմ պայքարի մասին» կոնվենցիայի 4-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն. «2. Ձգտելով սույն Կոնվենցիայի նպատակների իրականացմանը, Կողմերը.

ա/ համալիր մոտեցում են ընդունում անապատացման և երաշտի ֆիզիկական, կենսաբանական և սոցիալ-տնտեսական ասպեկտների նկատմամբ,

գ/ աղքատության արմատապես վերացմանն ուղղված ռազմավարություններն ինտեգրացվում են անապատացման դեմ պայքարի և երաշտի հետևանքների նվազեցման ջանքերի մեջ,

դ/ նպաստում են Կոնվենցիայի Կողմ հանդիսացող ազդեցության ենթարկված պետությունների միջև համագործակցությանը շրջակա միջավայրի պաշտպանության և հողային ու ջրային ռեսուրսների պահպանության ոլորտներում, քանի որ այդ համագործակցությունը նպաստում է անապատացման և երաշտի դեմ պայքարին:»

- Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիան հիմնվել է այն գաղափարի վրա, որ մարդու կյանքի որակն ուղղակի կախվածության մեջ է նրան շրջապատող միջավայրի որակից և, հետևաբար, կարևոր են ոչ միայն արժեքավոր բնական և մշակութային լանդշաֆտները, այլ նաև առօրյա միջավայրը, լքված և դեգրադացված տարածքները. Լանդշաֆտներն են ձևավորում երկրի ինքնատիպ պատկերը, արտահայտում բնակվող մարդկանց արժեքային համակարգը, ինչպես նաև խթանում կամ արգելակում են տնտեսական զարգացումը: Ըստ Կոնվենցիայի լանդշաֆտը ճանաչվում է որպես հանրության և անհատական բարեկեցության (ֆիզիկական, ֆիզիոլոգիական, հոգեբանական և ինտելեկտուալ իմաստով) նախապայման, ինչպես նաև կայուն զարգացմանն ու տնտեսական գործունեությանը նպաստող ռեսուրս:

Կոնվենցիայի համաձայն անտառային լանդշաֆտների վերացումը նույնպես կարող են առաջացնել տեսողական /վիզուալ/ աղտոտում: «Վիզուալ աղտոտման ներազդեցությունը մարդու հոգեբանական վիճակի վրա գնահատվում է որպես էսթետիկական բնույթի գործոն և համարվում ոչ պակաս վտանգավոր, քան շրջակա միջավայրի աղտոտման այլ տեսակները: Առօրյա կյանքում տեսողական աղտոտումից առաջացող ընկճվածության արդյունքում մարդը մշտապես գտնվում է հոգեբանական անհարմարավետության (դիսկոմֆորտի) վիճակում, ինչը բացասաբար է անդրադառնում մարդու տրամադրության և առողջության վրա:»

Ելնելով վերը նշվածից, կատարելով բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ քննություն, ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ և միջազգային նորմերի պահանջներով՝ ՀՀ Բնապահպանական հանրային դատարանը

ՎՃՌԵՑ

1. Անտառային ոլորտում թույլ տրված օրինախախտումները, որոնք խաթարել են Հայաստանի էկոլոգիական անվտանգությունը, հանգեցրել են էկոհամակարգերի ոչնչացմանը, նպաստել են սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացմանը, որոնց արդյունքում պատճառվել է անդառնալի էկոլոգիական և առանձնապես խոշոր չափերի տնտեսական վնաս, ճանաչել որպես բնության, մարդու և պետության դեմ ուղղված հանցագործություն:

2. Ստեղծված իրավիճակի համար պատասխանատու ճանաչել ՀՀ կառավարությանը, ՀՀ բնապահպանության, ՀՀ գյուղատնտեսության, ՀՀ արտակարգ իրավիճակների, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություններին, «Հայաստառ» ՊՈԱԿ-ին, ՀՀ կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին:

2. Դիմել ՀՀ Դատախազությանը՝ պահանջելով.

ա/ Ստուգել՝ անտառային օրենսդրության խախտումների վերաբերյալ քրեական գործերի կարճման օրինականությունը:

բ/ Հայտնաբերել անտառախախտման իրական բոլոր մեղավորներին, այդ թվում, պատվիրատուներին՝ անտառախախտումների վերաբերյալ քրեական գործեր քննելիս:

գ/ Ստուգել Հայաստանում փայտածուխի արտադրության, իրացման և արտահանման օրինականությունը, հայտնաբերել ոլորտում տեղ գտած օրինախախտումները և կիրառել համապատասխան միջոցառումներ դրանց վերացման ուղղությամբ:

դ/ Ստուգել Երևանի նախկին անտառտնտեսության Էրեբունու անտառպետության տարածքում անտառապատման համար հատկացված 59 մլն. դրամի նպատակային օգտագործումը և անտառային հողերից 24.42 հա՝ Նուբարաշենի նոր աղբավայրի կառուցման համար, հատկացման օրինականությունը:

ե/ Ստուգել Ծաղկաձորի անտառային հողերի նպատակային նշանակությունը փոխելու, հողհատկացումների և կառուցապատման օրինականությունը, ինչպես նաև Կոտայքի մարզի անտառային ֆոնդի հողերի կատեգորիայի փոփոխման /ՀՀ կառավարության 05.04.07թ. հ.422-Ն որոշման/ և այդ հողերի հետագա տնօրինման օրինականությունը:

զ/ Ստուգել «Արևիք» ազգային պարկի հատուկ նշանակության հողերից 186.4 հա՝ Մեղրասարի ոսկու հանքավայրի շահագործման նպատակով, հատկացնելու օրինականությունը:

ը/ Ստուգել Հանքավանի 500 հա անտառային ֆոնդի հողերի օտարման օրինականությունը:

3. Դիմել ՀՀ քննչական կոմիտեին, պահանջելով.

ա/ Հարուցել քրեական գործեր՝ անտառային օրենսդրության խախտման մեջ մեղավոր անձանց նկատմամբ՝ բացահայտելով բոլոր մեղավորներին, այդ թվում՝ պատվիրատուներին:

բ/ Հարուցել քրեական գործ՝ Թեղուտի անտառը սահմանված քանակից ավել, հատելու, պետությանը վնաս պատճառելու և անտառվերականգնման ծավալները կեղծելու փաստերի առթիվ:

4. Դիմել ՀՀ կառավարությանը՝ պահանջելով.

1.

ա/ Մշակել ծրագիր՝ ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի շրջանակներում ընդունված «Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողությունները/ներդրումը» (INDC) փաստաթղթով (ՀՀ կառավարության 10.09.15թ. հ.41-Ս որոշում) Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունը՝ մինչև 2050 թվականը երկրի անտառապատվածությունը հասցնել 20.1%-ի, կատարելու համար և հաստատել ժամանակացույց, սահմանելով որքան տարածք է անտառապատվելու մինչև 2030թ. և 2030թ-ից մինչև 2050թ., ինչ միջոցներով, որոնք են անտառապատման ենթակա հողատարածքները, նկատի ունենալով, որ 266,5 հազար հեկտար՝ անտառապատման ենթակա տարածք, անտառային հողերի կատեգորիայում չկա: Կիրառել «երկրի արտաքին պարք-բնություն» հաշվանցման մեխանիզմը՝ անտառվերականգնում իրականացնելով:

բ/ Պարզել, ինչքան անտառ է հիմնվել՝ ի կատարումն ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի շրջանակներում ստանձնած միջազգային պարտավորության, 2015թ-ից մինչև 2019թ. և հրապարակել արդյունքները:

գ) Իրականացնել Հայաստանի Հանրապետության անտառի ազգային քաղաքականության և ռազմավարության /2004թ./ և ՀՀ անտառի ազգային ծրագրով /2005թ./ նախատեսված և դեռ չիրականացված միջոցառումները, դիտարկելով

անտառը որպես էկոհամակարգ, հիմք ընդունելով շրջակա միջավայրի ու դրա բաղադրիչների ամբողջական պահպանությունը և պաշտպանությունը:

դ) Անտառային պետական կոմիտեն դուրս բերել ՀՀ բնապահպանության նախարարության կազմից և դարձնել ՀՀ կառավարության ենթակա մարմին՝ ՀՀ Կառավարության անտառի պետական կոմիտե, ընդգրկելով դրա կազմում «Հայանտառ» ՊՈԱԿ-ը /հիմք՝ «Հայաստանի Հանրապետության անտառի ազգային քաղաքականություն և ռազմավարություն» հաստատված ՀՀ Կառավարության կողմից 2004թ. և ՀՀ անտառի ազգային ծրագիրը, հաստատված ՀՀ կառավարության 21.07.05թ. հ.1232 որոշմամբ/:

ե/ Ստեղծել պետական անտառների միասնական ֆոնդ, որը կկառավարվի մեկ մարմնի՝ Անտառի պետական կոմիտեի կողմից /որտեղ կլինեն ստորաբաժանումներ պետական անտառների կառավարման և հատուկ պահպանվող տարածքների կառավարման/:

զ/ Ստեղծել ՀՀ Կառավարության անտառի պետական կոմիտեի կազմում.

- Անտառի պահպանության պետական ծառայություն, օժտելով ծառայության աշխատողներին /անտառապահներին/ լայն իրավագործություններով /իրավախախտողներին պատասխանատվության ենթարկելու, տեխնիկական միջոցները, գործիքները և անօրինական ճանապարհով ստացված փայտանյութը առգրավելու և այլն/, ապահովելով անհրաժեշտ միջոցներով /համազգեստ, զենք, տրանսպորտային, կապի և այլ միջոցներ/ և նախատեսելով ապահովագրական ու խրախուսման միջոցներ /անտառապահին վճարել հավելավճար՝ իր կողմից հայտնաբերված իրավախախտումների համար գանձված տուգանքի որոշակի տոկոսի չափով/

- Անտառապաշտպանության ծառայություն, ապահովելով բոլոր անհրաժեշտ միջոցներով /ինքնաթիռ, ուղղաթիռ, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, թունաքիմիկատներ և այլն/՝ անտառը վնասատուներից, հիվանդություններից և հրդեհներից պաշտպանելու համար

- Անտառմելիորատիվ ծառայություն՝ ապահովելով անհրաժեշտ տեխնիկական միջոցներով

- Մերմնային և տնկարանային տնտեսություններ՝ ապահովելով անհրաժեշտ սարքավորումներով

է/ Անտառտնտեսություններին տալ իրավաբանական անձի կարգավիճակ:

ը/ Մշակել բոլոր անտառտնտեսությունների համար անտառկառավարման պլաններ:

թ/ Անցակացնել անտառի գույքագրում և հաշվառում՝ օգտագործելով առաջատար տեխնոլոգիաները, այդ թվում, տիեզերական նկարահանումները:

ժ/ Հատկացնել գումար անտառի կադաստրի վարման համար:

ժա/ Հատկացնել բյուջեից բավարար ֆինանսական միջոցներ՝ անտառների վերականգնման, պահպանման համար:

ժբ/ Ներգրավել ֆինանսական միջոցներ միջազգային աղբյուրներից:

ժգ/ Ստեղծել Անտառային ֆոնդ, որտեղ կկուտակվեն անտառախատումների համար բռնագանձվող վարչական տուգանքների գումարները, ինչը կծախսվի անտառների պահպանության և անտառապահներին խրախուսման նպատակով:

ժդ/ Մշակել «ՀՀ անտառային և ՀՀ հողային օրենսգրքերում լրացում ու փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ, նախատեսելով անտառային հողերի կատեգորիայի փոփոխությունը բացառիկ դեպքերում, օրենքի հիման վրա կատարելու դրույթ, և ներկայացնել ՀՀ Ազգային ժողով:

ժե/ Ուժը կորցրած ճանաչել ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքներում և անտառային ֆոնդի հողերում հողհատկացման անտառային հողերի նպատակային նշանակության /կատեգորիայի/ փոփոխման ու քաղաքաշինական գործունեության կարգը հաստատելու մասին» 08.05.2003թ. հ.613-Ն որոշումը, որպես ՀՀ օրենսդրությանը հակասող:

ժզ/ Պարզել ՀՀ կառավարության 30.08.07թ. հ.1045 որոշման 8-րդ կետի 8.1 ենթակետով սահմանված՝ հատված անտառի կրկնակի չափով անտառվերականգնման պարտավորության կատարումը և խախտումներ թույլ տված կազմակերպությունների նկատմամբ կիրառել պատժամիջոցներ:

ժէ/ Մշակել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության» ՀՀ օրենքի 14-րդ հոդ. 6-րդ մասի 5-րդ կետի «ա» ենթակետը՝ «5) անտառային տնտեսության ոլորտում՝ ա. անտառվերականգնում, անտառապատում.», ուժը կորցրած ճանաչելու մասին» օրենքի նախագիծ և ներկայացնել ՀՀ Ազգային ժողով:

ժը/ Արգելել բոլոր տեսակի անտառահատումները հինգ տարի ժամկետով:

ժթ/ Նպաստել փայտի թափանցիկ շուկայի ձևավորմանը և այն պաշտպանել ապօրինի փայտանյութի ներթափանցումից /հատատեղի հատկացումից մինչև

իրացում և արտադրություն ողջ շղթայի հսկողական մեխանիզմի ներդրում՝ հսկողության միասնական համակարգի ստեղծում /արգելքի ավարտից հետո/:

ի/ Կազմակերպել առաջարկների հիմնավորումների հավաստիության ընտրանքային ստուգիչ ուսումնասիրություններ՝ պետական անտառներում բնափայտի մթերման տարեկան հաշվարկային հատատեղի հաստատման գործընթացում /արգելքի ավարտից հետո/:

լ/ Օժանդակել համայնքային անտառների և դաշտապաշտպան անտառաշերտի ստեղծմանը և վերականգնմանը:

2. Հանձնարարել.

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ.

ա/ Վարել անտառային կադաստրը և հանրայնացնել այն, բարձրացնել կառույցի հաշվետվողականությունը և թափանցիկությունը

բ/ իրականացնել հսկողություն անտառների արտադրողականության բարձրացման, անտառավերականգնման, անտառապատման և խնամքին ուղղված պետական նպատակային ծրագրերի, ինչպես նաև անտառային հողերում հրդեհային անվտանգության, վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների իրականացման նկատմամբ:

«ՀԱՅԱՆՏԱՌ» ՊՈԱԿ-ԻՆ.

ա/ Սահմանել խիստ հսկողություն մասնաճյուղերում իրականացվող անտառավերականգնման, խնամքի, սանիտարական հատումների գործընթացների նկատմամբ;

բ/ Քարտեզագրել անտառային ճանապարհները՝ անտառներում հրդեհների մարման և կանխարգելման նպատակով և հանրայնացնել;

գ/ Ստեղծել հնարավորություններ անտառներում 24-ժամյա հսկողություն իրականացնելու համար՝ կիրառելով նաև տեխնիկական միջոցներ;

դ/ Վերացնել Հայաստանի անտառային հողերի վերաբերյալ կադաստրային տվյալներում տեղ գտած անճշտությունները՝ ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հետ համատեղ:

ե/ Ավելացնել անտառավերականգնման միջոցառումների տեսակարար կշիռը բարձրարժեք ծառատեսակների հաշվին՝ անտառի կազմը բարելավելու նպատակով:

զ/ Հրապարակել ստուգման ակտերը:

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ

ա/ Խստացնել վերահսկողությունը «Հայանտառ» ՊՈԱԿ-ի մասնաճյուղերում և Բնության հատուկ պահպանվող տարածքներում: Որպես վերահսկողության օբյեկտ դիտարկել ոչ միայն ապօրինի անտառահատումները, այլև անտառային հողերի օգտագործման և վարձակալության օրինականությունը, անտառվերականգնման և անտառշինական աշխատանքների և պարտավորությունների կատարումը, անտառային հողերի դեգրադացիան, անտառնեղում վայրի բույսերի և կենդանիների պահպանությունը, ջրային տարածքների պահպանությունն ու տարբեր բնույթի թափոններով աղտոտման կանխարգելմանն ուղղված աշխատանքների իրականացումը /հիմք՝ «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, 22-րդ հոդ. 1-ին մասի 5-րդ կետ/:

բ/ Կատարել անտառային ոլորտում իրականացված ստուգումների վերլուծություն և յուրաքանչյուր տարվա վերջում ներկայացնել հետագա խախտումների կանխարգելմանն ուղղված առաջարկներ:

գ/ Հրապարակել անտառային ոլորտում ստուգումների ստուգման փաթեթը, մասնավորապես, ստուգման ակտի պատճենը, կամ ամբողջական բովանդակությունը, իրավախախտման արձանագրությունը, ստուգման արդյունքում տրված հանձնարարականները, այլ գերատեսչություններին ներկայացված միջնորդագրերը կամ առաջարկությունները, շրջակա միջավայրին պատճառված վնասի հաշվարկները բոլոր բաղադրիչներով:

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ.

ա/ Անտառային տարածքների հրդեհների արագ մարման, մեկուսացման, կանխարգելման նպատակով միջոցներ ձեռնարկել համապատասխան տեխնիկական միջոցների ձեռք բերման, ինչպես նաև աշխատակազմի մասնագիտական գիտելիքների բարձրացման, վերապատրաստման, կազմակերպման, ուղղություններով, այդ գործընթացում ներգրավվել, ինչպես «Հայանտառ» ՊՈԱԿ-ի աշխատակիցներին, այնպես էլ անտառամերձ համայնքների բնակիչներին:

բ/ իրականացնել համատեղ ծրագրեր «Հայանտառ» ՊՈԱԿ-ի և համայնքների հետ՝ հակահրդեհային միջոցառումների արդյունավետ իրականացման համար:

ՀՀ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ

ա/ Վերացնել Հայաստանի անտառային հողերի վերաբերյալ կադաստրային տվյալներում տեղ գտած անճշտությունները՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի հետ համատեղ և կատարել պետական գրանցում:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և բողոքարկման ենթակա չէ:


Դատավորներ՝

Ն.Վարդանյան

Կ.Դանիելյան

Ջ.Հովհաննիսյան

Ի.Զարաֆյան

The image shows four handwritten signatures in blue ink, corresponding to the names listed on the left. The signatures are written in a cursive style. The first signature is for N. Vardanyan, the second for K. Danielyan, the third for J. Hovhannisyan, and the fourth for I. Zharafyan.